

14.

ԵՐԿ ՈԱՉՄԱՐԿԵՍՏԻ ՄԱՍԻՆ*

ՍՈՒՆ ՃԵՂԻ



Թարգմանչի Նախաբանը

Ռազմական գիտությունն առաջացել է դեռևս հնագույն ժամանակներում: Արդեն Բաբելոնում, Պարսկաստանում և Հնդկաստանում փորձեր էին արվում կանոնակարգել թագավորների և զինվորների իրավունքներն ու պարտականությունները:

Ռազմական տեսությունն անհրաժեշտությունը կանխորոշեց ռազմական տեսաբանների երևան գալը, որոնք փորձում էին ընդհանրացնել ռազմական փորձը: Երկար ժամանակ այս ասպարեզում առաջնությունը պատկանում էր հույն ռազմական տեսաբաններին: Իրականում, սակայն, այս ասպարեզում առաջնությունը պատկանում է Հին Չինաստանին: Չին ռազմական տեսաբանների կողմից կազմվեց «Յոթնագիրքը», որն ընդգրկում էր յոթ ընտիր ռազմական երկ: Այդ երկերից առավել արժեքավորներն են «Սուն Յըզին» և «Ու Յըզին»՝ այդպես են կոչվել հեղինակների՝ Սուն Յըզիի և Ու Յըզիի անուններով:

* Սա Սուն Յըզիի երկի այս թարգմանության երկրորդ, լրամշակված հրատարակությունն է: Առաջինը 100 օրինակով լույս է տեսել 2006 թ., եր.: ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ. – 68 էջ:

րով: Նրանց ազդեցությունն ներքո ստեղծվեց Հին Չինաստանի հետագա ուղղափառական գրականությունը:

Հին Չինաստանի ուղղափառական տեսաբաններից առանձնանում է Սուն Յըզի (մ.թ.ա. 6-5-րդ դարեր): Նրա գաղափարները զգալի ազդեցություն են թողել Ասիայում: Զորավարի երկը մի քանի անգամ թարգմանվել է եվրոպական լեզուներով, իսկ 19-րդ և 20-րդ դարերում Չինաստանում և Ճապոնիայում բարձրագույն սպայական կազմի ուսուցման ծրագրում ներառվում է նաև այս երկը: Սուն Յըզիի աշխատությունների արժեքավորությունն մասին է վկայում նաև այն փաստը, որ 1943 թվականին Խորհրդային Միության համար վճռորոշ տարում, Կ. Վորոշիլովի անվան բարձրագույն զինվորական ակադեմիայի ուղղափառական արվեստի ամբիոնի կողմից հրատարակվեց Սուն Յըզիի երկի ռուսերեն թարգմանությունը:

Նախկին ԽՍՀՄ-ում Սուն Յըզիի երկը մի քանի անգամ թարգմանվել է չինարենից և տանգուտերենից:

Սուն Յըզիի երկը բաղկացած է 13 գլխից, որից յուրաքանչյուրը (բացի 12-րդից) ունի ծանոթագրությունների բաժինը: Այն իրենից ներկայացնում է տասը, իսկ մեկ այլ տեքստի՝ տասնմեկ ուղղափառական մեկնաբանների պարզաբանումները: Դա հնարավորություն է տալիս առավել խորությամբ ըմբռնել զորավարի այս կամ այն միտքը:

Սույն երկի թարգմանությունը կատարելիս՝ մեզ համար հիմք է հանդիսացել՝ *Сунь-Цзы, Трактат о военном искусстве* (Перевод с древнекитайского и примечания подполковника Сидоренко Е. И. Вступительная статья и редакция текста профессора, генерал-майора Разина Е. А.). Воен. изд. Министерства Обороны СССР, Москва, 1955 աշխատությունը: Ծանոթագրությունների բաժնում մեր կողմից ավելացվել է 10-րդ բաժինը, ինչպես նաև լրացվել են մյուս բաժինները՝ ուղղափառական մեկնաբանների լրացուցիչ բացատրություններով, որոնց համար օգտագործվել է հետևյալ հրատարակությունը՝ *Сунь Цзы в тангутском переводе*. Факсимиле ксилографа. Издание текста, перевод, введение, комментарий, грамматический очерк, словарь и приложения К. Б. Кепинг. Москва, Изд. “Наука”, Главная редакция восточной литературы, 1979.

Սուն Յըզիի կյանքի ու գործունեության վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ նա եղել է ՈՒ իշխանության, որի տիրակալն էր Հե-լյուն (մ.թ.ա. 514-495 թթ.), գորավարը: Սուն Յըզին հաջողությամբ ղեկավարել է 30 հազարանոց բանակ և տարել բազմաթիվ փալյուն հաղթանակներ:

Ռուբեն Սահակյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	343
Գլուխ I Հիմնական հաշվարկները (Յըզի)	347
Գլուխ II Պատերազմի վարումը (Յըզոշժան)	349
Գլուխ III Ռազմավարական հարձակում (Մոուգուն).....	351
Գլուխ IV Ձև (Սին).....	354
Գլուխ V Հզորություն (Շի)	355
Գլուխ VI Լեզու-լեզունություն և դատարկություն (Սյուլ, Շի)	357
Գլուխ VII Պայքարը պատերազմում (Յյունշժեն)	360
Գլուխ VIII Ինը փոփոխություն (Յզյուբյան).....	363
Գլուխ IX Զորքն արշավի ժամանակ (Սինցզյուն).....	364
Գլուխ X Տեղանքի ձևերը (Դիսին)	368
Գլուխ XI Ինը տեղանք (Յզյուդի)	371
Գլուխ XII Հարձակում կրակով (Խոգուն).....	377
Գլուխ XIII Հետախույզների օգտագործումը (Յունցըզյան).....	378
Ծանոթագրություններ.....	381
1-ին գլխի ծանոթագրություններ.....	381
2-րդ գլխի ծանոթագրություններ.....	388
3-րդ գլխի ծանոթագրություններ.....	390
4-րդ գլխի ծանոթագրություններ.....	392
5-րդ գլխի ծանոթագրություններ.....	393
6-րդ գլխի ծանոթագրություններ.....	395
7-րդ գլխի ծանոթագրություններ.....	398
8-րդ գլխի ծանոթագրություններ.....	400
9-րդ գլխի ծանոթագրություններ.....	401
10-րդ գլխի ծանոթագրություններ.....	402
11-րդ գլխի ծանոթագրություններ.....	404
13-րդ գլխի ծանոթագրություններ.....	408

ՔԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հիմնական հաշվարկները (Յրգի)*

Սուն Յրգին ասաց. պատերազմը պետության համար մեծ գործ է, կյանքի ու մահվան հարց է, գոյության կամ կործանման ուղի: Այս հիմնական դրույթն անհրաժեշտ է հաստատուն իմանալ¹: Ուստի պատերազմը վճռվում է հինգ գործոններով, նրան համեմատում են (յոթ) հաշվարկների հետ և որոշում են (հետևյալ) դրույթներով. առաջինը՝ Դատ (ուղի), երկրորդը՝ Տյան (երկինք), երրորդը՝ Դի (երկիր), չորրորդը՝ Յրգյան (գորավար), հինգերորդը՝ Ֆա (օրենք):

Ուղին՝ երբ ժողովրդի մտքերն ու տիրակալի մտքերը միանման են: Այդ իսկ պատճառով ժողովուրդը պատրաստ է տիրակալի հետ մեռնել կամ ապրել, երբ ժողովուրդը չի վախենում հնարավոր վտանգից և վախ չգիտի²:

Երկինքը՝ լույսն ու խավարն է, ցուրտը և շոգը, ժամանակի հաջորդականությունն³ է:

Երկիրը՝ հեռավորությունն ու մոտիկությունն է, անանցանելիությունն է ու անցանելիությունը, լայնն ու նեղը, մահն ու կյանքը⁴:

Ջուրավարը՝ քաջությունն է, մարդասիրությունն է, արդարությունն է, խստությունն է⁵:

Օրենքը՝ զինվորական կարգ ու կանոնն ու կարգապահությունն է, զորքի ղեկավարումն ու մատակարարումը⁶:

Այս հինգ կանոնները հայտնի են յուրաքանչյուր զորավարի, սակայն հաղթում է նա, ով յուրացրել է դրանք, ով չի յուրացրել, (նա) չի հաղթում:

Ուստի պատերազմը համեմատում են (յոթ) հաշվարկների (հետ) և որոշում (հետևյալ) դրույթներով. տիրակալներից նա, ով ճիշտ կորոշի

* Մանոթագրությունները տրվում են ըստ գլուխների, երկի վերջում:

Ուղին, Երկնքի ու Երկրի վիճակը, ով կատարում է կանոններն ու հրամանները⁷, ով ավելի ուժեղ զորք ունի⁸, ում մոտ հրամանատարներն ու ռազմիկները⁹ (չի և ցըզա) ավելի լավ են նախապատրաստված¹⁰, ով արդարացիորեն պարգևատրում և պատժում է¹¹:

Այդ ամենով ես կիմանամ, թե ով հաղթանակ կտոնի և ով պարտութուն կկրի¹²:

Այն զորավարը, որը կկիրառի իմ հաշվարկները, հաստատուն կերպով յուրացնելով դրանք, անպայման կհաղթի, թող նա հրամայի զորքերին, (այն) զորահրամանատարը, որ չի հենվում իմ հաշվարկների վրա, չյուրացնելով դրանք, անպայման պարտութուն կկրի, այդպիսի զորավարին պեսք է հեռացնել: Եթե զորավարը յուրացրել է հաշվարկները, հաշվի առնելով շահը, դրանք կկազմեն հզորութուն, որը կարող է օգտագործվել և այս հաշվարկների սահմաններից դուրս¹³:

Հզորությունը լինում է այն դեպքում, երբ հաշվի են առնում օգուտը և կիրառում են մարտավարութունը:

Պատերազմը խաբեության ուղին է: Ուստի, եթե դու որևէ բան կարող ես անել, ցույց տուր, որ չես կարող: Եթե օգտվում ես որևէ բանից, ցույց տուր, որ չես օգտվում, եթե հեռու ես գտնվում, ցույց տուր, որ մոտիկ ես, հակառակորդին հրապուրիր շահով, հակառակորդի մոտ խառնաչիոթ առաջացրու և հաղթիր նրան: Եթե հակառակորդի մոտ ամեն ինչ առատ է, պատրաստ եղիր, եթե հակառակորդն ուժեղ է քեզանից, խուսափիր նրանից, եթե նա ենթակա է զայրույթի, նրան հավասարակշռութունից հանիր, խոնարհ տեսք ընդունելով, նրա մեջ ինքնավստահութուն առաջացրու, թարմ ուժերը ուժասպառ արա, եթե հակառակորդի շրջանում համաձայնութուն կա, անկարգութուն մտցրու, հարձակվիր հակառակորդի վրա, երբ նա պատրաստված չէ, հայտնվիր այնտեղ, որտեղ նա քեղ չի սպասում¹⁴: Սակայն չի կարելի վաղորդք մատնանշել որևէ եղանակ¹⁵:

Ընդհանրապես, ով որ ճակատամարտից առաջ նախնական հաշվարկով հաղթանակում է, հաղթանակի ավելի մեծ հնարավորութուններ ունի, ով մինչև ճակատամարտը նախնական հաշվար-

կողմ չի հաղթում, նա քիչ հնարավորություն ունի հաղթելու, առավել ևս չի հաղթում նա,ով որ շունի նախնական հաշվարկներ: Այս հաշվի առնելով, ինձ համար հասկանալի են հաղթանակն ու պարտությունը:

ՔԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Պատերազմի վարումը

(Յրզոյժան)

Սուն Յրզին ասաց. ընդհանրապես պատերազմ վարելու կանոնները հետևյալն են՝ եթե ունես 1000 չիչե (թեթև մարտականք) և 1000 գեչե (զուժակային ծանր կառքեր), 100000 դայցզա (զրահապատ գինվորներ)¹, եթե պարենը գորքի համար պետք է ուղարկել 1000 լիից* ավելի, պետք է հաշվի առնել ներքին և արտաքին ծախսերը, հյուրերին ընդունելու ծախսերը, լաքի ու սոսնձի՛ համար նյութեր, ծախսերը մարտականքերի ու սպառազինության համար, ապա՝ այդ ամենի համար օրական կպահանջվի 1000 ցզին (ոսկի), միայն այդ պայմաններում կարելի է ոտքի հանել հարյուր հազարանոց զորք:

Եթե պատերազմը վարում են, և հաղթանակը երկար ժամանակով հետաձգվում է, ապա գենքը բթանում է, և ծայրը կոտրվում է, եթե ամրոցի պաշարումը երկարաձգվում է, ուժերը սպառվում են, եթե զորքը գտնվում է երկարատև ռազմարշավի, ապա պետության միջոցները չեն բավականացնում:

Եթե գենքը բթանում է, (նրա) ծայրը կոտրվում է, ուժերը հյուժվում են, միջոցները սպառվում են, ապա իշխանները (չժոխոտու) դրուժյունից օգտվելով, քո դեմ դուրս կգան²: Դրանից հետո նույնիսկ իմաստուն խորհրդականները ոչինչ չեն կարող անել:

* Կի՝ երկարության միավոր, հավասար է 576 մետրի:

† Լաքն օգտագործվում էր մարտականքերը, աղեղները, նիզակների փայտյա մասերը մշակելու և ողորկելու համար: Սոսինձն օգտագործվում էր որպես գենքը խոնավությունից պաշտպանելու միջոց:

Ուստի պատերազմում նրա արագ հաղթանակի մասին լսում են նույնիսկ նրա անհմուտ վարման դեպքում և չեն տեսնում հաջողությունը երկարատևության մեջ, նույնիսկ երբ այն վարպետորեն են վարում:

Երբևիցե դեպք չի եղել, որ պատերազմը երկարատև բնույթ կրի և դա շահավետ լինի պետության համար: Այդ իսկ պատճառով, նա, ով չի հասկանում ողջ վնասը, որ հասցնում է պատերազմը, նա չի կարող խորությամբ ըմբռնել պատերազմի օգուտը:

Ով կարողանում է պատերազմը վարել, (նա) երկու անգամ զորահավաք չի կատարում, երեք անգամ պարեն չի փոխադրում³, սպառազինությունը վերցնում է պետությունից, իսկ պարենը՝ հակառակորդից, ուստի պարենը նրան կբավականացնի:

Պատերազմի ժամանակ պետական գանձարանն աղքատանում է, որովհետև զորքի համար պարենը բերվում է հեռվից: Երբ պարենը բերվում է հեռվից, ժողովուրդն աղքատանում է:

Ձորքի մոտակայքում բնակվող բնակչությունը զորքի համար անհրաժեշտ ամեն ինչ վաճառում է թանկերբ ամեն ինչ վաճառվում է թանկ, ժողովրդի ունեցվածքը հատնում է, երբ ունեցվածքը սպառվում է, պարհակները դժվար է կատարել:

Երբ երկրի ուժերը հյուժվում են, ժողովրդի միջոցները սպառվում են, այդ ժամանակ բնակչության տները դատարկվում են, ժողովրդի գույքը նվազում է յոթ տասներորդով⁴: Տիրակալի գույքը՝ շարդված սայլեր, հոգնատանջ ձիեր, զրահներ, սաղավարտներ, նետեր, աղեղներ, նիզակներ, մեծ ու փոքր վահաններ⁵, եզներ, մեծ սայլեր՝ այդ ամենը նվազում է վեց տասներդականով:

Ուստի խելացի զորավարն անպայման սնվում է հակառակորդի հաշվին: Հակառակորդից վերցրած մեկ շժուռ ուտելիքը համապատասխանում է սեփական քսան շժուռին, հակառակորդից գրաված մեկ դանը* համապատասխանում է սեփական քսան դանին:

* Դանը հավասար է 59,63 կիլոգրամի:

Ուստի հակառակորդին սպանում է կատաղությունը, հակառակորդի հարստությունը գրավում է ազահությունը՝:

Այդ իսկ պատճառով, եթե կովի ընթացքում մարտակառքերը գրավեն տասը և ավելի մարտակառք, որպես պարզև, բաժանիր դրանք նրան, ով առաջինն է դրանք գրավել: Հակառակորդից գրաված մարտակառքերի դրոշակները փոխարինիր քոնով և օգտագործիր այդ մարտակառքերը քոնի հետ: Գերված ռազմիկների հետ լավ վարվիր և հոգ տար նրանց մասին: Դա նշանակում է՝ հաղթել հակառակորդին և ավելացնել քո ուժերը:

Այդ իսկ պատճառով պատերազմը գնահատում է հաղթանակը և չի հարգում երկարատևությունը:

Ուստի պատերազմի էությունը հասկացող զորավարը ղեկավարում է ժողովրդի ճակատագիրը և հանդիսանում է պետության անվտանգության տիրակալը:

ՔՆՈՒՄ ԵՐՐՈՐ

Ռազմավարական հարձակում

(Մոուզուն)

Սուն Յըզին ասաց. սովորաբար պատերազմի վարման կանոնները հետևյալն են՝ կարևոր է պահպանել հակառակորդի պետությունն անվնաս, քան ջախջախել նրան, կարևոր է պահպանել հակառակորդի ցզյուն անվնաս, քան ջախջախել նրան, կարևոր է պահպանել հակառակորդի լյուն անվնաս, քան ջախջախել նրան, ավելի կարևոր է պահպանել հակառակորդի ուն անվնաս, քան ջախջախել նրան¹:

Ուստի հարյուր անգամ մարտ մղել և հարյուր անգամ հաղթանակ տանել դեռ չի նշանակում լավագույնից լավագույնը: Լավագույնից լավագույնն այն է, որպեսզի հնազանդեցնել հակառակորդի բանակն առանց մարտի: Այդ պատճառով պատերազմի բարձրագույն արվեստը՝ հակառակորդի ծրագրերը խախտելն է, որից հետո քայքայել նրա դա-

շինքները, հաջորդ վայրում ջախջախել նրա զորքերը և, վատթարագույնը՝ ամրոցի պաշարումը:

Ամրոցի պաշարման կանոնների համաձայն, պաշարումը կատարվում է այն դեպքում, երբ դա անխուսափելի է: Մեծ վահանների², պաշարողական կառքերի³, զանազան ռազմական հանդերձանքի նախապատրաստման համար պահանջվում է երեք ամիս, և դա էլ չես հասցնի: Զորավարը, սակայն, չկարողանալով հաղթահարել իր անհամբերությունը, մրջյունների հոսքի նման նետում է իր ռազմիկներին գրոհի, ուստի և կորցնում է իր ռազմիկների մեկ երրորդը, և, այնուամենայնիվ, ամրոցը մնում է անառիկ: Այդպիսին է պաշարման բացասական ազդեցությունը:

Ուստի, ով վարպետորեն է վարում պատերազմը, նա հնազանդեցնում է օտար զորքերն առանց ճակատամարտի, գրավում է ամրոցներն առանց պաշարման, ջախջախում է օտար պետություններն առանց երկարատև կամպանիաների: Ամեն ինչ անվնաս պահպանելով, նա պայքարում է երկնաբարձունքի տիրապետության համար: Այդ պատճառով առանց պատերազմ մղելու կարելի է շահ ունենալ: Դա է ռազմավարական հարձակման կանոնը:

Ուստի գոյություն ունեն պատերազմը վարելու կանոններ՝ եթե քո ուժերը տասն անգամ գերազանցում են հակառակորդին, ապա պետք է շրջապատել նրան, եթե քո ուժերը հինգ անգամ են գերազանցում, պետք է գրոհել հակառակորդի վրա, եթե քո ուժերը երկու անգամ են ավելի հակառակորդի ուժերից՝ պետք է քո զորքը բաժանես երկու մասերի, հավասար ուժեր ունենալու դեպքում կարելի է մարտը վարել, եթե քո ուժերը քիչ են կարելի է պաշտպանվել, եթե քո ուժերը զիջում են հակառակորդին բոլոր պարագաներում, կարողացիր խուսափել մարտից⁴: Ուստի ոչ մեծ ուժերը կարող են համառ պայքար մղել, սակայն նրանք բոլորն էլ կարող են դառնալ հակառակորդի առավել խոշոր ուժերի գերինները:

Սովորաբար զորավարը պետություն հենարանն է: Եթե այդ հենարանը կատարյալ հատկություններ ունի, (ապա) պետությունն անպայ-

ման ուժեղ կլինի, եթե այդ հենարանը թերուժյուններ ունի, ապա պետուժյունն անպայման թույլ կլինի:

Ուստի զորքը տառապում է իր տիրակալից երեք դեպքում՝

1. Երբ նա, չգիտենալով, որ զորքը չի կարող հարձակվել, հրամայում է հարձակվել, երբ նա, չգիտենալով, որ զորքը չպետք է նահանջի, նրան հրամայում է նահանջել: Այդ նշանակում է, որ նա կաշկանդում է զորքը:

2. Երբ նա, չիմանալով զորքերում գործի էությունը, զորքերի ղեկավարման համար տարածում է այն նույն սկզբունքները, որոնք կիրառվում են պետության ղեկավարման դեպքում: Նման պարագայում հրամանատարները զորքերում շփոթմունքի մեջ են ընկնում:

3. Երբ նա, չգիտենալով զորքերի մարտավարությունը, զորավարին նշանակում է այն նույն սկզբունքով, ինչպես պետությունում: Այդ ժամանակ հրամանատարները զորքերում շփոթմունքի մեջ են ընկնում:

Հետևաբար գոյություն ունեն պատերազմն ապահովող հինգ պայմաններ՝

- հաղթում է նա, ով գիտի, թե երբ կարելի է կռվել, իսկ երբ՝ չի կարելի.
- հաղթում է նա, ով կարողանում է ղեկավարել մեծ և փոքր ուժերը.
- հաղթում է նա, ում մոտ վերևից ներքև գոյություն ունեն միասնական ցանկություններ⁵.

- հաղթում է նա, ով ցուցաբերում է զգուշություն և սպասում է հակառակորդի անզգուշությանը.

- հաղթում է նա, ում մոտ զորավարը տաղանդավոր է և նրան թագավորը չի ղեկավարում⁶:

Այս հինգ պայմաններն են դեպի հաղթանակը տանող ուղիները:

Այդ պատճառով ասում են՝ եթե գիտես նրան և ճանաչում ես քեզ, թեկուզ հարյուր ճակատամարտ վարիր՝ վտանգ չի լինի, եթե գիտես նրան և չես ճանաչում քեզ, մի անգամ կհաղթես և մի անգամ պարտություն կկրես, եթե չգիտես ոչ նրան, ոչ էլ քեզ, (ապա) յուրաքանչյուր ճակատամարտում պարտություն կկրես:

ՔԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՁԼ

(ՍԻՆ)

Սուն Յըզին ասաց. նա, ով հնում վարպետորեն էր պատե-
րազմը վարում, սկզբում իրեն դնում էր անպարտելի դրուժյան մեջ և
հարմար առիթ էր ակնկալում հակառակորդին հաղթելու համար:

Անպարտելիությունը կախված է մեզանից, սակայն հաղթանակի
հնարավորությունը գտնվում է հակառակորդի մեջ: Հետևաբար, ով լավ
է կռվում, կարող է իրեն անպարտելի դարձնել, սակայն չի կարող ստի-
պել հակառակորդին, որպեսզի նա թույլ տա իրեն հաղթել:

Հետևաբար ասվում է՝ կարելի է իմանալ, թե ինչպես է հնարավոր
հաղթել, սակայն գործնականում դրան հասնել չես կարող:

Անպարտելիությունը պաշտպանությունն է, հաղթանակի հնարավո-
րությունը հարձակումն է: Պաշտպանություն՝ նշանակում է ինչ որ թերու-
թյան առկայություն, հարձակում՝ նշանակում է, որ ամեն ինչ առատ է¹:

Նա, ով լավ է պաշտպանվում, թաքնվում է իններորդ հողի տակ,
նա, ով լավ է հարձակվում, գործում է իններորդ երկնքից: Ուստի մենք
կարող ենք պահպանել մեզ և լիակատար հաղթանակ տանել:

Ով հաղթանակը տեսնում է որպես սովորական մարդ, լավագույ-
նից լավագույնը չէ²: Նրա մասին, ով հաղթանակ կտանի ճակատամար-
տում, Երկնատակը կասեն. «լավ է կենսագործվել», սակայն դա նույն-
պես չի լինի լավագույնից լավագույնը:

Ուստի աշնանային փետուրիկ բարձրացնելը մեծ ուժի նշան չէ,
տեսնել արևն ու լուսինը՝ դեռ չի նշանակում ունենալ սուր տեսողու-
թյուն, ամպրոպի որոտը լսելը զգայուն լսողության (նշան) չէ:

Հնում ասում էին այն մասին, թե լավ կռվում էր և հաղթում նա, ում
(մարտում) դյուրին էր հաղթել: Հետևաբար, ով լավ կռվելով հաղթել էր,
նա չի ունեցել ոչ հուշակավոր անուն, ոչ էլ հերոսական սխրագործու-
թյուններ: Այդ իսկ պատճառով, նրա ճակատամարտերն ու հաղթանակ-
ներն արդյունք էին այն բանի, որ նա սխալներ չի կատարել: Ով որ սխալ-

ներ թույլ չի տալիս՝ նրա կողմից ձեռնարկած ամեն ինչը հաղթանակի է բերում: Նա հաղթում է արդեն պարտվածին:

Ուստի նա, ով լավ է կռվում այնպիսի դիրք է գրավում, որի դեպքում պարտությունն անհնար է և պահճը բաց չի թողնի հակառակորդին պարտության մատնելու համար: Ահա թե ինչու, զորքը, որ պետք է հաղթի, կռիվ է փնտրում միայն այն բանից հետո, երբ հաղթանակն (արդեն) ապահովված է, պարտության դատապարտված զորքը սկզբում կռվում է, և միայն հետո է հաղթանակ փնտրում:

Ով պատերազմը վարպետորեն է վարում, նա իրականացնում է Ուղին և պահպանում է Օրենքը³: Հետևաբար, նա կարող է ղեկավարել հաղթանակն ու պարտությունը:

Պատերազմի օրենքների համաձայն, գոյություն ունեն՝ առաջին՝ երկարություն (դու), երկրորդ՝ ծավալ (լյան), երրորդ՝ թիվ (շու), չորրորդ՝ քաշ (չեն), հինգերորդ՝ հաղթանակ (շեն)⁴: Տեղանքը ծնում է երկարություն, երկարությունը՝ ծավալ, ծավալը՝ թիվ, թիվը՝ քաշ, քաշը՝ հաղթանակ:

Ուստի հաղթող զորքը նման է «ի»-ի* քաշին «չժուի» քաշի համեմատությամբ, իսկ պարտության դատապարտված զորքը նման է «չժուի» քաշին՝ «ի»-ի համեմատ:

Ճակատամարտում հաղթում է նա, ով նման է 1000 ժեն[†] բարձրությունից դեպի անդունդը գահավիժող կուտակված ջրին: Այդ է ձևը⁵:

ՉԼՈՒՄ ԶԻՆԳԵՐՈՐԴ

Հզորություն

(ՇԻ)

Սուն Յրզին ասաց. սովորաբար խոշոր ուժերի ղեկավարումը հիմնված է այն նույն սկզբունքի վրա, ինչ փոքր ուժերի ղեկավարումը: Էությունը միայն ստորաբաժանումների և քանակի մեջ է¹:

* «ի»-ն կշռի միավոր է, հավասար է 24 լյանի (10 կգ) արծաթի, «չժուի»՝ կշռի միավոր է, հավասար է 1/48 լյանի (100 ցորենահատիկի քաշը):

† «ժեն», երկարության միավոր է, հավասար է 2,56 մետր:

Մեծ ուժերով մարտը վարելու սկզբունքը նույնն է, երբ մարտը վարում են փոքր ուժերով: Էությունը միայն ձևի և անվան մեջ է: Այն, ինչը զորքը դարձնում է անպարտելի, հակառակորդի հետ մշտապես հանդիպելիս, կանոնավոր մարտը և հմուտ զորաշարժն է²:

Զորքի հարվածը պետք է լինի այնպիսին, ինչպես նետված ջրաղացքարը հարվածում է ձվին: Դա լեփ-լեցունությունն ու դատարկությունն է³:

Ընդհանրապես հակառակորդի հետ մարտը սկսում են կանոնավոր մարտով, իսկ հաղթում են զորաշարժով: Ուստի նա, ով լավ է օգտագործում զորաշարժը՝ անսահման է, ինչպես երկինքն ու երկիրը, անսպառ է, ինչպես գետերի հոսանքն ու հեղեղը⁴: Ավարտվում և սկսվում է արևի և լուսնի նման՝ մահանում և կրկին ծնվում է, ինչպես տարվա շրջադասանակները: Զայներանգներն առնվազն հինգն են, սակայն այդ ձայներանգների զուգակցումը ստեղծում է մեղեդիներ, որոնք կարելի է անընդհատ լսել, գույներն առնվազն հինգն են, սակայն այդ գույների զուգակցումը ստեղծում է բազմաթիվ գուներանգներ, որոնք տեսնելն իսկ անհնար է, համերն առնվազն հինգն են, սակայն այդ հինգ համերն ստեղծում են բազմաթիվ համային հատկություններ, որոնք բոլորը հնարավոր չէ զգալ: Մարտական հզորությունը կախված է կանոնավոր մարտից և զորաշարժից, սակայն կանոնավոր մարտի և զորաշարժի զուգակցումը կարելի է ստեղծել անվերջ: Զորաշարժը և կանոնավոր մարտը ծնունդ են տալիս մեկը մյուսին, շրջապատույտի նման, որը վերջ չունի: Ո՞վ կարող է սպառել դրանք մինչև վերջ:

Այն, որ ջրի բուռն հեղեղը իր հոսանքով տանում է նաև քարեր, նշանակում է հզորություն: Այն, որ գիշատիչ թռչունը սրընթաց խոցում է իր զոհին՝ նախանշված հարված է: Ուստի, լավ կովողի հզորությունը սրընթաց է, իսկ ծրագրավորումը՝ կարճ: Հզորությունը նման է ձգված աղեղալարին, իսկ ծրագրավորված հարվածը նման է արձակված նետի:

Ամեն ինչ խառնվել և խճճվել է, անկանոն մարտ է ընթանում, սակայն անկարգության մեջ չեն կարող ընկնել, խառնաշփոթության և քառսի մեջ չեն կարող ընկնել, շնայած ձևը խախտված է, միևնույնն է, պարտություն չեն կարող կրել⁵:

Անկարգությունը ծնվում է կարգ ու կանոնից, վախկոտությունը ծնվում է քաջությունից, թուլությունը ծնվում է ուժից⁶: Կարգ ու կանոնը և անկարգությունը ստեղծվում են թվով, քաջությունն ու վախկոտությունը ստեղծվում են հզորությունմբ, ուժն ու թուլությունը առաջանում են ձևով⁷:

Այդ է պատճառը, որ նա, ով հմտորեն շարժում է հակառակորդին ձևի ցուցադրմամբ, հակառակորդն անպայման հետևում է դրան, երբ հակառակորդին մի ինչ-որ բան են տալիս, նա անպատճառ վերցնում է, շահով նրան ստիպում են շարժվել, իսկ դիմավորում են դարանով:

Ահա թե ինչու լավ կովոդները փնտրում են հզորություն և ամեն ինչ մարդկանցից չեն պահանջում: Ուստի կարողանալով ընտրել մարդկանց, նրանց նշանակում է հզորությունը համապատասխան⁸:

Երբ մարդկանց նշանակում են իրենց հզորությունը համապատասխան, նրանք մարտի են գնում գլորվող ծառերի ու քարերի նման: Հարթ տեղանքում քարերի ու ծառերի հատկությունն է՝ ընկած լինել առանց շարժվելու, երբ տեղը թեք է, ապա նրանք գլորվում են: Ուստի մարտում վարպետորեն օգտագործված մարդկանց հզորությունը նման է կլոր քարի, որը բաց է թողնված 1000 ժեն⁹ բարձրություն ունեցող լեռից: Դա է հզորությունը:

ՊԼՈՒՄ ՎԵՑԵՐՈՐԴ

Լեփ-լեցունություն և դատարկություն¹

(Սյույ, Շի)

Սուն Յրզին ասաց, սովորաբար նա, ով մարտադաշտ առաջինն է գալիս և սպասում հակառակորդին, նա մարտին նախապատրաստված է, ով ուշացավ մարտադաշտ գալ և ընթացքից մարտի մեջ մտավ, նա արդեն հոգնած է: Ուստի նա, ով որ լավ է մարտնչում, ղեկավարում է հակառակորդին և թույլ չի տալիս հակառակորդին ղեկավարել իրեն:

Ով կարողանում է հակառակորդին ստիպել (իր կամքով) գալ, նա նրան շահով է գայթակղեցնում, ով կարողանում է հակառակորդին թույլ չտալ գալ, նա նրան (թշնամուն) կասեցնում է վնասով: Ուստի հակառա-

կորդի թարմ ուժերը կարելի է հոգնեցնել, կուշտին կարելի է ստիպել քաղց զգալ, պինդ կառչածին էլ կարելի է տեղաշարժել:

Առաջ շարժվել այնտեղ, որտեղ նա (հակառակորդը) անպայման կնախաձեռնի ուղղվել, առաջանալ այնտեղ, ուր նա բացարձակապես ինձ չի սպասում: Ով 1000 լին անցնում է առանց հոգնելու, նա անցնում է այն վայրերով, որտեղ մարդիկ չկան²:

Հարձակվել և անպայման գրավել՝ նշանակում է հարձակվել շպաշտպանվողի վրա, պաշտպանվել և անպայման պահել՝ նշանակում է այնպես պաշտպանվել, որ նա (հակառակորդը) չկարողանա հարձակվել:

Ուստի, ով կարողանում է հարձակվել, հակառակորդը չգիտի, թե որտեղ պաշտպանվի, ով լավ է պաշտպանվում, հակառակորդը չգիտի, թե որտեղ հարձակվի: Օ՛ր, նրբագույն արվեստ: Նույնիսկ բառերով այն շեւ արտահայտի: Ուստի կարելի է դառնալ հակառակորդի ճակատագրի կառավարողը:

Առաջ շարժվել անարգել, նշանակում է հարվածը հասցնել հակառակորդին դատարկության մեջ: Նահանջել առանց հանդիպելու՝ նշանակում է արագությունն այնպիսին է, որ ի վիճակի չեն հասնել:

Ուստի, երբ ցանկանում եմ մարտի բռնվել, չնայած հակառակորդը թաքնվում է բարձր պարիսպների հետևում, շրջապատված խորը խրամներով, այնուամենայնիվ նա կկռվի ինձ հետ, որովհետև հարձակման ժամանակ նա անպայման պետք է պաշտպանվի: Երբ ես չեմ ուզում մարտի բռնվել, հենց որ ես տեղ գրավեմ և սկսեմ պաշտպանվել, հակառակորդը չի կարող ինձ հետ կռվել, որովհետև ես նրան շեղում եմ այդ վայրից:

Հետևաբար, հակառակորդին ցույց տալով ձևը, ինքս այն չեմ ունենա, ես կպահպանեմ իմ ամբողջականությունը, իսկ հակառակորդը մասերի կբաժանվի: Իմ ամբողջականությունը կկազմի միավոր, հակառակորդը բաժանվելով մասերի, կկազմի տասը միավոր: Այդ ժամանակ ես, օգտագործելով բոլոր տասն էլ, կհարձակվեմ հակառակորդի միավորի վրա, մենք շատ կլինենք, իսկ հակառակորդը՝ քիչ: Ով կարողանում է զանգվածով հարվածել (թվով) քչերին, որոնք կռվում են ինձ հետ, նրան դյուրին է հաղթել³:

Արա այնպես, որ հակառակորդը չիմանա, թե որ վայրում նա պետք է կուլի: Երբ վայրերը, որտեղ հակառակորդը պետք է պատրաստ լինի, շատ են, ապա նրանք, ովքեր կովելու են ինձ հետ, քիչ են:

Ուստի, նախապատրաստվելով առջևում, նրա մոտ քիչ ուժեր կլինեն ետևում, նախապատրաստվելով աջում, նրա մոտ քիչ ուժեր կլինեն ձախում: Եթե չես կարող պատրաստ չլինել (եթե ցանկանում ես պատրաստ լինել), ապա պետք է բավականաչափ ուժեր ունենաս: Սակայն ուժեր ունի նա, ով պատրաստ է ամենուր, շատ ուժեր ունի նա, ով հարկադրում է ուրիշին պատրաստ լինել ամենուր:

Հետևաբար, երբ գիտես ճակատամարտի վայրը և ճակատամարտի օրը, ապա գտնվելով 1000 լիից հեռու, դու կկարողանաս կովել: Երբ չգիտես ճակատամարտի վայրը, չգիտես նաև ճակատամարտի օրը, ապա ձախ թևով չես կարող օգնել աջին, աջ թևով չես կարող օգնել ձախին, առջևում գտնվողները չեն կարող օգնել ետևիններին, առավել ևս - դա վերաբերում է նրանց, ովքեր գտնվում են մի քանի տասնյակ լի հեռավորության վրա և նրանց, ովքեր գտնվում են ավելի մոտ՝ մի քանի լի հեռավորության վրա:

Չնայած ես ասում եմ, որ յուժեհներն ավելի շատ զորք ունեն, սակայն հայտնի չէ՝ նրանք կհաղթե՞ն, թե՞ պարտություն կկրեն: Ուստի ասված է. «Հաղթանակը կարելի է ստեղծել»: Թող հակառակորդի մոտ շատ զորք լինի, սակայն կարելի է նրան թույլ շտալ մարտի մեջ մտնել⁴:

Հետևաբար, գնահատելով հակառակորդին, անհրաժեշտ է իմանալ նրա պլանն իր բոլոր արժանիքներով և թերություններով⁵: Այնպես արա, որպեսզի իմանաս նրա հանգիստը դեկավարող սկզբունքները, ցույց տուր նրան որևէ ձև և կիմանաս նրա կյանքի ու մահվան տեղը, բախվելով հակառակորդի հետ, կիմանաս, թե որտեղ նա ունի առատություն և որտեղ՝ պակաս⁶:

Ուստի սեփական զորքին տրվող ձևի ծայրահեղ սահմանը՝ այնպես անել, որպեսզի ձև չլինի: Երբ ձև չկա, ապա նույնիսկ իմաստունը չի կարող որևէ բանից գլուխ հանել:

Օգտվելով այդ ձևից, հաղթանակը դրվում է զանգվածների վրա, սակայն զանգվածն այդ մասին չի կարող իմանալ: Բոլոր մարդիկ գիտեն այն ձևը, որից օգտվելով ես հաղթել եմ, սակայն չգիտեն այն ձևը, որից օգտվելով ես կազմակերպել եմ հաղթանակը: Ուստի մարտում տարած հաղթանակը հնարավոր չէ կրկնել միևնույն տեսքով, այն համապատասխանում է ձևերի անվերջ տեսակներին:

Ջորջի ձևը նման է ջրին, ջուրը բարձունքի վրա չի մնում և ձգտում է դատարկությանը: Ջուրը հաստատում է իր հոսքը՝ կախված տեղանքից, գորքը հաստատում է հաղթանակը՝ կախված հակառակորդից:⁷

Ուստի գորքը շունի մշտական հզորութունն, ջուրը շունի մշտական ձև: Ով կարողանում է հակառակորդից կախված օգտվել փոփոխութուններից և փոխակերպումներից ու նրանց հիման վրա հասնում է հաղթանակի, նա կոչվում է Աստվածութուն⁸:

Հետևաբար, բնության հինգ ուժերի մեջ չկան մշտապես հաղթողներ: Տարվա շորս եղանակների մեջ չկա մշտապես սահմանվածը: Արևն ունի կարճատևութուն և երկարատևութուն, լուսինն ունի կյանք և մահ⁹:

ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ

Պայթարը պատերազմում (Ցյունչժեն)

Սուն Յըզին ասաց. սովորաբար պատերազմի կանոնները հետևյալն են՝ զորավարը թագավորից ստանալով կարգադրություն, հավաքում է զորքը, կենտրոնացնում է ուժերը և ռազմարշավի ելնելով՝ հակառակորդի հետ շփման մեջ է մտնում: Չկան այնպիսի դժվարութուններ, ինչպիսին՝ պայքարն է պատերազմում¹:

Պայքարի դժվարութունն այն է, որպեսզի շրջանցիկ ճանապարհը վերածի ուղիղի, աղետը վերածի օգուտի: Ուստի, նախընտրելով շրջանցիկ ճանապարհ, հրապուրիր հակառակորդին օգուտով: Հակառակորդից ավելի ուշ գուրս գալով, հասիր նրանից շուտ: Ով գիտի այս, նա օգտագործում է ուղիղ և շրջանցիկ ճանապարհները:

Հետևաբար, պայքարը պատերազմում հանգեցնում է օգուտի, պայքարը պատերազմում ստեղծում է նաև դժվարություններ: Եթե պայքարել միայն օգուտի համար, ողջ զորքը ոտքի հանելով, ապա որոշված նպատակին չես հասնի: Եթե պայքարել շահի համար՝ շարժունակ բանակ ուղարկելով, ապա հարկադրված կգոհես գումակը: Ուստի, երբ պայքարում են շահի համար 100 լիից հեռու, հանելով սպառազինությունը, առանց հանգստի օր ու գիշեր սլանալով, կրկնապատկելով երթուղիները և միավորելով անցումները², ապա գերի են ընկնում բոլոր երեք բանակների հրամանատարները³: Դիմացկուններն առաջ են անցնում, թույլերը քարշ են գալիս ետևում, և ողջ զորքից նպատակին է հասնում մեկ տասներորդը: Երբ պայքարում են շահի համար հիսուն լիից հեռու, ապա կիրոցնեն առաջավոր բանակի հրամանատարին, և ողջ զորքից (միայն) կեսն է հասնում նպատակին: Երբ պայքարում են շահի համար երեսուն լիից հեռու, ապա նպատակին հասնում է երկու երրորդը:

Ուստի, երբ շունի գումակ, նա (բանակը) կործանվում է, եթե չկա պարեն և (անասնա)կեր, այն (բանակը) կործանվում է, եթե չկա պաշարը այն (բանակը) կործանվում է:

Հետևաբար, ով չգիտի իշխանների դիտավորությունները, նա չի կարող նրանց հետ դաշինք կնքել: Ով չգիտի տեղանքի՝ լեռների ու անտառների, գառիթափերի և ուղղաբերձ դարափների, ճահճուտների ու ճահիճների բնույթը, նա չի կարող ղեկավարել զորքը: Ով չի օգտագործում տեղական ուղեկցորդներին, նա չի կարող օգտվել տեղանքի առավելություններից:

Ուստի, ով վարում է պատերազմը, շարժվում է խաբելու ուղիով, շարժվում է հանուն օգուտի, փոխում է դրությունը՝ բաժանելով և կենտրոնացնելով:

Հետևաբար նա (զորավարը) սրընթաց է քամու նման, հանգիստ է անտառի նման և խժուում է կրակի նման, (իսկ) նրա շարժումները նման են ամպրոպի հարվածին:

Գյուղերը թալանելու համար՝ զորքը մասերի բաժանիր, տարածքը գրավելիս՝ տիրի շահավետ կետերին:

Նախքան առաջ շարժվելդ, ամեն ինչ ծանր ու թեթև արա: Ով վաղ-օրոք գիտի ուղիղ և շրջանցիկ ճանապարհների սկզբունքները՝ նա հաղթում է: Դրանք են պատերազմում պայքարի օրենքները:

«Զորքերի ղեկավարումը» գրքում ասված է. « Ձայնով արտասանած բառն այնքան էլ հեռու չեն լսում, ուստի մտքրեցին կոչնազանգը (գոնգը) և թմբուկները, երբ նայում և այնքան էլ հեռու չեն տեսնում, այդ պատճառով մտքրեցին դրոշակներն ու դրոշները»⁴: Չէ՞ որ ով օգտագործում է կոչնազանգերն ու թմբուկները, դրոշներն ու դրոշակները՝ նա միավորում է իր ռազմիկների աչքերն ու ականջները: Եթե բոլոր ռազմիկները նպատակադրվում են մեկ ուղղության վրա, ապա քաջը միայնակության մեջ առաջ չի շարժվում, վախկոտներին միայնակ թույլ չեն տալիս ետ գնալ⁵: Դա է մարդկանց զանգվածների ղեկավարման օրենքը:

Հետևաբար, գիշերային մարտի ժամանակ շատ կրակ և թմբուկներ, (իսկ) ցերեկային մարտում շատ դրոշակներ են օգտագործում: Այդ նույն միջոցով մոլորության մեջ են գցում հակառակորդի աչքերն ու ականջները:

Այդ պատճառով ողջ զորքից կարելի է խլել ոգին, զորքերի հրամանատարից՝ խլել սիրտը: Ուստի առավոտյան հոգով քաջ են, ցերեկը հոգով ծուլանում են, (իսկ) գիշերը մտածում են ճամբար վերադառնալու մասին: Հետևաբար, ով որ պատերազմը վարպետորեն է վարում, խուսափում է հակառակորդից, երբ նա հոգով քաջ է և հարվածը հասցնում է այն ժամանակ, երբ նա ծուլացել կամ էլ մտածում է ճամբար վերադառնալու մասին: Դա է ոգու ղեկավարումը:

Գտնվելով կարգ ու կանոնի վիճակում, սպասում են հակառակորդի շրջանում անկարգությունների, գտնվելով հանգստության վիճակում, սպասում են հուզումների հակառակորդի շրջանում: Դա է ղեկավարումը սրտով:

Մոտիկ գտնվելով, սպասում են հեռու գտնվողներին, հանգստանալով, սպասում են հոգնածներին, լինելով կուշտ, սպասում են սովածներին: Դա է ուժի կառավարումը:

Ձեռնպահ մնա հակառակորդի վրա հարձակումից, երբ նրա դրոշակները կարգին են, մի հարձակվիր հակառակորդի ճամբարի վրա, երբ նա պահպանում է մարտակարգը: Դա է փոփոխությունների ղեկավարումը:

Հետևաբար, պատերազմի վարման կանոնն այսպիսին է՝ մի հարձակվիր բարձունքի վրա գտնվող հակառակորդի վրա, մի հակազդիր բարձունքից իջնող հակառակորդին, մի հետապնդիր շինծու փախչողին, մի հարձակվիր քաջ զինվորների վրա, մի գայթակղվիր ռազմական խայծով, մի կանգնեցրու տուն վերադարձող հակառակորդին, անպայման մի կողմը բաց թող*, ճնշում մի գործադրիր հակառակորդի վրա, երբ նա անելանելի վիճակում է գտնվում⁶: Դա է պատերազմի վարման կանոնը:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ինը փոփոխություններ

(Ցզյուբյան)

Սուն Յըզին ասաց. սովորաբար պատերազմի վարման կանոնները հետևյալն են՝ զորավարը տիրակալից հրաման ստանալով, հավաքում է զորքը և կենտրոնացնում է ուժերը:

Դժվարանցանելի տեղանքում ճամբար մի խփիր, մեծ ճանապարհների հատման վայրում դաշինքներ կնքիր, անապատային տեղանքում մի հապաղիր, շրջապատման վայրում մտածիր, մահվան տեղանքում կովիր:

Կան ճանապարհներ, որոնցով չեն գնում, կան զորքեր, որոնց վրա չեն հարձակվում, կան ամրոցներ, որոնք չեն գրոհում, կան տեղանքներ, որոնց համար չեն կռվում, լինում են տիրակալի հրամաններ, որոնք չեն կատարվում:

Հետևաբար, զորավարը, որը հասկանում է «ինը փոփոխությունների» էությունը, զորավարը, որը չի հասկանում «ինը փոփոխությունների» էությունը, նույնիսկ գիտենալով տեղանքի ձևը, չի կարող օգտագործել նրա օգուտը¹: Զորքերի ղեկավարման ժամանակ, եթե չգիտես «ինը փոփոխությունների» ար-

* Դեռևս հնում Սուն Յըզին նկատել է այն, ինչը արևմտասեփրոպական ռազմական տեսաբաններն անվանել են «ոսկյա կամուրջ»:

վեստը, չես կարող տիրապետել մարդկանց ղեկավարման արվեստին, նույնիսկ եթե գիտես «հինգ օգուտը»²:

Ուստի խելացի զորավարի գործողությունների կշռադատվածությունն այն է, որ նա պարտադիր կերպով միավորի օգուտն ու վնասը: Երբ օգուտի հետ միավորում են վնասը, ապա գործը կարելի է իրականացնել, երբ վնասի հետ միավորվում են օգուտը՝ ապա աղետը կարելի է վերացնել³: Հետևաբար իշխաններին հնազանդեցնում են վնասով, իշխաններին հարկադրում են ծառայել գործով, իշխաններին հարկադրում են ինչ-որ տեղ շարժվել շահից դրդված:

Ուստի պատերազմի վարման կանոնները պահանջում են հույսը չդնել այն բանի վրա, թե հակառակորդը չի գա, այլ հիմնվել նրան դիմավորելու մեր պատրաստվածություն վրա, չհուսալ, թե նա չի հարձակվի, այլ հիմնվել այն բանի վրա, որ մենք անհնարին կդարձնենք նրա հարձակումը:

Հետևաբար, զորավարի մոտ կան հինգ վտանգավոր սխալներ՝ երբ նա ձգտում է անպայման մահանալ՝ նա կարող է սպանվել, երբ նա ձգտում է անպայման կենդանի մնալ՝ նա կարող է գերի ընկնել, երբ նա շուտ է զայրանում՝ նրան կարող են արհամարհել, երբ նա պատվի նկատմամբ զգայուն է՝ նրան կարող են խայտառակել, երբ նա սիրում է մարդկանց՝ նրա համար կարող են անհանգստություններ ստեղծել⁴: Այս բոլոր վտանգները զորավարի թերություններն են, (և) աղետ են պատերազմի ժամանակ: Ջախջախում են զորքին, սպանում են զորավարին անպայման այս հինգ վտանգներով: Չի կարելի այդ չիմանալ:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Չորքն արշավի ժամանակ (Սիևգյուն)

Սուն Յրզին ասաց. սովորաբար զորքի տեղակայումը և հակառակորդին հետևելը իրականացվում է հետևյալ կերպ. լեռներով անցնելիս՝ շարժվիր հովիտներով, տեղավորվիր բարձունքի արևային

կողմի վրա, բարձրում գտնվող հակառակորդի վրա մի հարձակվիր: Ահա ամեն ինչ լեռներում գորքի տեղակայման մասին:

Ջրային արգելքն անցնելիս, անպայման գետից հեռու գտնվիր: Երբ ներխուժած հակառակորդն անցնում է գետը, նրան ջրի վրա մի դիմավորիր: Ընդհանրապես շահավետ է նրա մի մասին թույլ տալ գետն անցնել և հետո հարվածել: Ով որ ցանկանում է հակառակորդի հետ մարտի բռնվել, չպետք է նրան գետի մոտ հանդիպի: Տեղավորվիր գետի արևային կողմում: Հակառակորդի հետ հանդիպելու համար մի շարժվիր հոսանքի ուղղությամբ: Ահա ամեն ինչ գորքը ջրային տարածքի վրա տեղակայելու մասին:

Ճահճով անցնելիս, շտապիր արագ հեռանալ, մի հապաղիր: Եթե քեզ առաջիկայում սպասվում է մարտը վարել ճահճի շրջանում, անպայման տեղավորվիր այնտեղ, որտեղ կա ջուր և խոտ, իսկ թիկունքում էլ անտառ լինի: Ահա այն ամենը, ինչ վերաբերում է ճահճում գորքի տեղակայմանը:

Հարթավայրային տեղանքում տեղավորվիր (այնպիսի) հարմար տեղում, որտեղ աչից ու ձախից կան բարձունքներ, վտանգը սպասիր առջևից, իսկ թիկունքն ապահովված է: Ահա այն ամենը, ինչ վերաբերում է հարթավայրում գորքերի տեղակայմանը:

Չորքերի տեղակայման այս շորս շահավետ եղանակներն ապահովեցին հուանդիի հաղթանակը շորս կայսրերի նկատմամբ¹:

Ընդհանրապես գորավարը պետք է սիրի բարձր վայրերը և ատի ցածրերը, գնահատի արևային լույսը և մերժի ստվերը, հոգ տանի (մարդկանց) կյանքի մասին և հաշվի առնի տեղանքի իրողությունը, այդ դեպքում գորքերում հիվանդություններ չեն լինի: Դա կոչվում է պարտադիր հաղթանակ:

Բլրապատ և բարձունքաշատ տեղանքում տեղավորվիր նրանց արևային կողմում, դրանք ունեցիր աչից և թիկունքում, դա շահավետ է գորքի համար: Այդպիսին է տեղանքի օգնությունը:

Եթե գետի վերին հոսանքերում անձրևներ են եկել, և ջուրը փրփրում է, ապա նա, ով ցանկանում է (գետն) անցնել, թող սպասի, մինչև

գետը հանդարտվի: Ընդհանրապես, այն տեղանքում, ուր կան ուղղաձիգ ժայռեր, բնական ջրհորներ, քարանձավներ, բնական ծուղակներ, ճահճուտներ, բնական ճեղքեր, անպայման փութացեք նրանցից հեռանալ և մի մոտեցեք նրանց: Ինքդ հեռացիր դրանցից, իսկ հակառակորդին հրապուրելով, տար այնտեղ: Այնպես արա, որ նման տեղանքը գտնվի հակառակորդի թիկունքում:

Եթե զորքի տեղակայման վայրում կան ձորակներ, խոտածածկ ճահճուտներ, անտառներ, թփեր, մացառուտներ՝ անպայման հետազոտիր դրանք: Այդպիսի վայրերում դարաններ են լինում, և գտնվում են հակառակորդի դետքերը:

Երբ հակառակորդը մոտիկ է գտնվում, նա իրեն լուռ է պահում, դա նշանակում է, որ նա ցանկանում է, որպեսզի դու առաջանաս: Երբ հակառակորդը հարմար է տեղավորված, նշանակում է՝ նա շահ ունի:

Երբ ծառերը սկսում են շարժվել, նշանակում է՝ նա (հակառակորդը) մոտենում է, երբ խոտից պատրաստված մեծ քանակությամբ արգելափակիչներ են պատրաստված, նշանակում է՝ նա ցանկանում է քեզ մոտորություն մեջ գցել, որտեղ թռչունները դեպի վեր են թռչում՝ (նշանակում է, որ) այնտեղ դարան է արված, եթե գազանները վախեցած փախչում են՝ այնտեղ ինչ-որ մեկը թաքնվել է: Երբ փոշին վեր է բարձրանում, նշանակում է՝ մարտակառքերն են շարժվում, երբ փոշին բարձրանում է ցածր և լայն, նշանակում է՝ ամբոխն է գալիս (մեծ թվով հետիոտն մարտիկներ), երբ փոշին տարբեր ուղղություններով է բարձրանում, նշանակում է՝ վառելիք են հավաքում, եթե փոշին քիչ է և այս ու այն կողմ է շարժվում, նշանակում է՝ հակառակորդը ճամբար է կազմակերպում:

Երբ հակառակորդի ճառերը խոնարհ են, իսկ նախապատրաստություններն ուժեղացված, նշանակում է՝ նա պատրաստվում է հարձակման, երբ նրա ճառերը հանդուգն են և նա փորձեր է անում առաջ շարժվել, նշանակում է՝ նա պատրաստվում է նահանջել: Երբ նրա թեթև մարտակառքերն առաջ են գալիս, իսկ զորքը տեղավորվում է նրանց թևերում, նշանակում է՝ հակառակորդը մարտակարգ է կազմում: Եթե հակառակորդն ընկճված չէ և խաղաղություն է խնդրում, նշանակում է՝ նա

գաղտնի դիտավորություն ունի: Երբ նրա մոտ արագ այս ու այն կողմ են վազում, և ռազմիկները մարտակարգեր են գրավում, նշանակում է՝ պահճը հասել է: Երբ նրա մոտ ոմանք հարձակվում, իսկ ուրիշները նահանջում են՝ նշանակում է, որ նա փորձում է հրապուրել (հարձակման): Երբ նրա ռազմիկները զենքին հենված կանգնած են՝ նշանակում է, որ նրանք սոված են: Երբ նրա (հակառակորդի) ջրկիրները մոտենալով ջրին, սկզբում իրենք են խմում՝ նշանակում է նրանք տառապում են ծարավից: Երբ նա տեսնում է շահճը և չի հարձակվում, նշանակում է՝ նա ուժասպառ է եղել:

Որտեղ թռչունները հավաքվում են երամներով՝ այնտեղ ոչ ոք չկա²: Երբ գիշերը հակառակորդի մոտ միմյանց ձայն են տալիս՝ նշանակում է, որ այնտեղ վախենում են: Երբ զորքը կազմալուծված է՝ նշանակում է, որ զորավարը հեղինակություն չունի: Երբ գրոշակներն ու դրոշները տեղից տեղ են փոխադրվում, նշանակում է՝ տեղի են ունենում անկարգություններ: Երբ նրա (հակառակորդի) հրամանատարները զայրանում են՝ նշանակում է՝ զինվորները հոգնել են: Երբ հակառակորդի զորքում ձիերին կերակրում են կորեկաձավարով, իսկ իրենք միս են ուտում, սափորները չեն կախում և չեն վերադառնում իրենց ճամբարը, նշանակում է, որ նրանք հուսահատության են հասել, ինչպես ավազակները³:

Երբ զորավարը ռազմիկների հետ զրուցում է երկար, քնքուշ, հարգանքով, նշանակում է՝ նա կորցրել է զանգվածների վստահությունը: Երբ նա (զորավարը) հաճախ է պարզևատրում, նշանակում է՝ զորքը գտնվում է դժվարության մեջ, երբ հաճախ է պատժում, նշանակում է՝ ընկել է կարգապահությունը: Երբ նա սկզբում դաժան է, իսկ հետո վախենում է զանգվածներից, նշանակում է՝ ռազմական արվեստի գեր անհասկացություն:

Երբ հակառակորդի կողմից գալիս են դեսպանները հաճոյախոսություններով և սիրալիրություններով, նշանակում է՝ նա զինադադար է խնդրում: Երբ հակառակորդի զորքը գրգռված առաջ է գալիս, սակայն երկար ժամանակ չի ցանկանում մարտի մեջ մտնել և ետ չի քաշվում՝ այդ դեպքում պահանջվում է ուշադիր հետևել նրան:

Պարտադիր չէ գորքն սվելացնել մինչև քանակական գերազանցությունը, չի պահանջվում առաջ գնալ միայն ռազմական հզորությունը: Բավական է ունենալ անհրաժեշտ քանակությունը գորք և կենտրոնացնելու ճանապարհով ու դրություն ճիշտ գնահատմամբ կարելի է վերցնել (հաղթել) հակառակորդին: Ով չի մտածում և հակառակորդին թեթևամտորեն է վերաբերվում, նա անպայման նրա (հակառակորդի) գերին է դառնում⁴:

Եթե ռազմիկներին, մինչև նրանց քո հետ կապվելը, սկսես պատժել, նրանք քեզ չեն ենթարկվի, և այդ դեպքում նրանց դժվար կլինի օգտագործել: Եթե ռազմիկները լավ են տրամադրված քո նկատմամբ, սակայն պատիժներ չեն կիրառվում, այդ դեպքում նրանց բացարձակապես չի կարելի օգտագործել⁵:

Ուստի, հրամայելով ռազմիկներին՝ օգտվիր քաղաքացիական սկզբունքից՝ պահանջելով նրանցից լիակատար հնազանդություն, անպայման օգտվիր զինվորական սկզբունքներից, երբ հրամաններն ընդհանրապես կատարվում են, այն ժամանակ, երբ դու ժողովրդին մի ինչ-որ բան ես հրամայում՝ ժողովուրդը հնազանդվում է, երբ հրամանները ընդհանրապես չեն կատարվում, ապա, երբ դու որևէ բան ես հրամայում՝ ժողովուրդը չի ենթարկվում: Երբ հրամաններն ընդունվում են վստահությունով և պարզ գիտակցմամբ, ապա դու և զանգվածները փոխադարձաբար հասկանում եք միմյանց⁶:

ԳՆՈՒՄ ՏԱՍԵՐՈՐԴ

Տեղանքի ձևերը

(Դիսին)

Սուն Յըզին ասաց. տեղանքն իր ձևով լինում է՝ մատչելի, թեք, կտրտված, դաշտավայրային, լեռնային, հեռավոր:

Երբ ես կարող եմ անցնել և նա (հակառակորդը) կարող է գալ, այդպիսի տեղանքը կոչվում է մատչելի: Մատչելի տեղանքում առաջին հերթին զբաղեցրու արևային կողմի բարձունքները և ապահովիր մա-

տակարարման ուղիների պահպանումը, այդ դեպքում օգուտ (առավելու թյուն) կունենաս:

Երբ դյուրին է գնալ և դժվար է վերադառնալ, այդպիսի տեղանքը կոչվում է թեք: Թեք տեղանքում, եթե հակառակորդը պատրաստ չէ մարտի, եթե առաջանաս՝ կհաղթես նրան, եթե հակառակորդը պատրաստ է մարտի, առաջանալով՝ չես հաղթի նրան, վերադառնալ դժվար է, օգուտ չես ունենա:

Երբ և քո, և հակառակորդի համար հարձակվելը շահավետ չէ, այդպիսի տեղանքը կոչվում է կտրտված: Կտրտված տեղանքում մի հարձակվիր նույնիսկ այն ժամանակ, երբ հակառակորդը տալիս է այդ հնարավորությունը, ետ քաշիր գորքերդ և հեռացիր, հարկադրի հակառակորդին անցնել այնտեղ կիսով չափ (ուժերի մի մասով), հարվածելով նրան՝ օգուտ կունենաս:

Դաշտավայրային տեղանքում, եթե առաջինն այն գրավես, տեղավորի (գորքը) ամենուրեք և սպասիր հակառակորդի մոտենալուն: Եթե հակառակորդը, կանխելով, կգրավի այն, մի հետևիր նրան: Հետևիր նրան (այն դեպքում), երբ նա այն ամբողջությամբ չի գրավի:

Լեռնային տեղանքում, եթե առաջինը այն գրավես, անպայման տեղավորվիր արևային կողմի բարձունքի վրա և սպասիր հակառակորդի մոտենալուն: Եթե հակառակորդը, կանխելով քեզ, կգրավի այն, ետ քաշիր գորքերդ և հեռացիր: Մի հետևիր նրան:

Հեռավոր տեղանքում, ուժերի հավասարության դեպքում դժվար է մարտը սկսել: Եթե սկսես մարտը, (ապա) չես շահի:

Այս բոլոր վեց կանոնները ուսմունքն են տեղանքի մասին: Զորավարի հիմնական պարտականությունն է դրանք լավ իմանալ:

Ուստի, երբեմն գորքը հապճեպորեն նահանջում է, երբեմն այն ուժասպառ է լինում, երբեմն ընկնում է հակառակորդի ձեռքը, երբեմն նա կազմալուծվում է, երբեմն անկարգություններ են ծագում: Այդ վեց աղետները միակը չեն: Դրանք առաջանում են զորավարի սխալների հետևանքով: Եթե հավասար պայմաններում մեկը հարձակվում է տասի վրա, արդյունքում ստացվում է հապճեպ նահանջ¹: Եթե ռազմիկներն ու-

ժեղ են, իսկ հրամանատարները թույլ՝ նշանակում է զորքն անհնազանդ է: Երբ հրամանատարներն են ուժեղ, իսկ ռազմիկները թույլ՝ նշանակում է՝ զորքը կզերվի հակառակորդի կողմից: Երբ բարձրաստիճան հրամանատարներն իրենց դժգոհությունն են արտահայտում, չեն ենթարկվում իրենց պետին, իսկ հակառակորդի հետ բախման ժամանակ իրենց պետի նկատմամբ ունեցած թշնամանքի պատճառով հակառակորդի դեմ ինքնագլուխ մարտ են սկսում, նշանակում է՝ զորավարը չգիտի նրանց ընդունակությունները, այդպիսի պայմաններում զորքը կկործանվի: Եթե զորավարն ի վիճակի չէ գնահատել հակառակորդին, երբ նա իր փոքրաթիվ ուժերով հարձակվում է հակառակորդի մեծաքանակ ուժերի վրա, երբ զորքում չկան հարվածային ջոկատներ, նշանակում է՝ զորքը դատապարտված է փախուստի: Այս վեց կանոնները պարտություն մասին ուսմունքն են: Զորավարի հիմնական պարտականությունն է՝ դրանք հաստատորեն իմանալ:

Ձէ՞ որ տեղանքի ձևն օգնում է զորքերին: Ուստի գլխավոր զորահրամանատարի խնդիրն է՝ կարողանալ գնահատել հակառակորդին, կազմակերպել հաղթանակը, հաշվի առնել անանցանելիությունը, կիրճերը, հեռու և մոտ լինելը: Ով մարտը վարում է գիտենալով այս, նա անպայման հաղթում է, ով որ վարում է մարտը չգիտենալով այս, նա անպայման պարտություն է կրում²:

Ուստի, եթե համոզված ես, որ պատերազմի վարման մասին ուսմունքի համաձայն անպայման կհաղթես, ապա կովիր, նույնիսկ այն դեպքում, եթե տիրակալն ասում է՝ «Մի կովիր»: Եթե պատերազմի մասին ուսմունքի համաձայն չես հաղթելու, մի կովիր, եթե նույնիսկ տիրակալն ասում է. «Անպատճառ կովիր»³:

Հետևաբար, երբ զորավարը մարտի է ելնում, փառք չփնտրելով, իսկ նահանջում է չվախենալով խայտառակությունից, այս պարագայում նա մտածում է ժողովրդի մասին՝ այդպիսի զորավարը գանձ է պետություն համար:

Երբ ռազմիկներին կգիտես (կընդունես) այնպես, ինչպես քո երեխաներին, այդ դեպքում նրանց հետ կարող ես գնալ նույնիսկ ամենա-

խոր կիրճերը: Երբ ռազմիկներին կդիտես (կվերաբերվես) այնպես, ինչպես քո սիրելի որդիներին, այդ դեպքում նրանց հետ կարող ես գնալ թեկուզ մահվան: Երբ նրանց հետ առատաձեռն լինես՝ ապա չես կարող նրանց հրամայել, երբ անկարգություններ առաջանան, ապա դու չես կարող կարգ ու կանոն հաստատել՝ նման դեպքում նրանք նման են քմահաճ որդիների՝ նրանցից օգտվելն անհնարին կլինի⁴:

Երբ գիտակցում ես, որ քո ռազմիկների հետ կարելի է հարձակվել հակառակորդի վրա, սակայն չգիտես, որ հակառակորդի վրա չի կարելի հարձակվել՝ հաղթանակը կիսով չափ կլինի: Երբ գիտես, որ հակառակորդի վրա կարելի է հարձակվել, սակայն չգիտես, որ քո ռազմիկների հետ չի կարելի հարձակվել՝ հաղթանակը կիսով չափ կլինի: Երբ գիտես, որ հակառակորդի վրա հարձակվել կարելի է, որ քո ռազմիկների հետ կարող ես հարձակվել, սակայն չգիտես, որ տեղանքի ձևից ելնելով չի կարելի նրա վրա հարձակվել՝ հաղթանակը կիսով չափ կլինի:

Ուստի, ով գիտի պատերազմը, առաջանալով՝ չի սխալվի, սկսելով՝ փորձանքի մեջ չի ընկնի:

Հետևաբար ասվում է՝ եթե գիտես նրան (հակառակորդին) և գիտես քեզ՝ հաղթանակն ապահովված է, եթե դու նաև գիտես Երկինքն ու Երկիրը՝ հաղթանակն անպայման կարող է լինել ամբողջական:

ՓՈՒԽ ՏԱՄԱԵԿԵՐՈՐԴ

Ինը տեղանք

(Յըզյուդի)

Սուն Յըզին ասաց. պատերազմի վարման կանոնների համաձայն, գոյություն ունեն՝ սփռված տեղանքներ, թեթև (կամ սահմանային) տեղանքներ, վիճարկելի տեղանքներ, լուրջ տեղանքներ, դժվարանցանելի տեղանքներ, շրջապատման տեղանքներ, մահացու տեղանքներ:

Երբ իշխանները մարտնչում են իրենց տարածքի սահմաններում՝ դա սփռված տեղանքն է. երբ թափանցում են օտար տարածքը, սակայն

այնքան էլ չեն խորանում՝ թեթև (սահմանային) տարածքն է. երբ ես կզավթեմ և այն ինձ համար շահավետ է, նա (հակառակորդը) կզավթի՝ նրան նույնպես շահավետ է՝ վիճարկելի տեղանքն է: Երեք հարևան իշխանությունների միջև գտնվող տարածքը ով կգրավի առաջինը՝ նա կտիրի ողջ երկնաբարձունքին՝ մեծ ճանապարհներով հատող տեղանքն է. երբ օտար տարածքի մեջ խորանում են և թիկունքում թողնում են մեծ ամրացված շատ քաղաքներ՝ լուրջ տեղանքն է. երբ անցնում են լեռներով և անտառներով, անդունդների և զառիթափերի վրայով, ճահճուտներով և ճահիճներով և ընդհանրապես դժվարանցանելի ճանապարհներով՝ դժվարանցանելի տեղանքն է, (իսկ) երբ ճանապարհի մուտքը նեղ է, իսկ ճանապարհը, որով գնում են, ոլորապտույտ, երբ նա (հակառակորդը) փոքրաթիվ ուժերով կարող է հարձակվել իմ մեծաքանակ ուժերի վրա՝ շրջապատման տեղանքն է. երբ արագ մարտի մեջ չեն մտնում, կործանվում են՝ մահվան տեղանքն է՝:

Ուստի սփռված տեղանքում մի կռվիր, թեթև տեղանքում մի հապաղիր, վիճարկելի տեղանքում մի հարձակվիր, բաց տեղանքում կապը մի կտրիր, մեծ ճանապարհների հատման տարածքում միավորվիր դաշնակիցների հետ, լուրջ տեղանքում թալանիր, դժվարանցանելի տեղանքն անցիր, շրջապատման տեղանքում խորհիր, մահվան տեղանքում կռվիր:

Հնում ասում էին՝ լավ է կռվել նա, ով կարող է հակառակորդին այնպիսի կացություն մեջ դնել, որ նրա առաջավոր և թիկունքային մասերն իրար հետ փոխադարձ կապ չունենան, մեծ և փոքր ուժերը չհենվեն միմյանց վրա, ազնվազարմներն ու ստորինները չօգնեն միմյանց, բարձրագույններն ու ստորադասները կապված չլինեն միմյանց հետ, նրա (հակառակորդի) մոտ ռազմիկները բաժանված են եղել, խոչընդոտել են նրանց միավորումը, իսկ եթե զորքը միավորվել է, ապա, այնուամենայնիվ, միասնական չեն եղել: Շարժվել է, երբ ձեռնտու է եղել, երբ ձեռնտու չի եղել՝ մնացել է տեղում:

Համարձակվում եմ հարցնել, իսկ եթե հակառակորդը գա մեծ ուժերով, լրիվ մարտակարգով, ինչպե՞ս նրան դիմավորել: Ասեմ՝ նախ գրավիր այն, ինչը նրա համար թանկ է, երբ կգրավես՝ նա կհնազանդվի քեզ:

Պատերազմում ամենագլխավորը արագությունն է: Գրավիր այն, ինչին նա (հակառակորդը) չի հասցրել մոտենալ: Շարժվիր այն ճանապարհներով, որի մասին չի էլ ենթադրել: Հարձակվիր այնտեղ, որտեղ նա չի գգուշանում:

Ընդհանրապես, հակառակորդի սահմանները ներխուժած օտարականի մտադրությունն այն է, որպեսզի իր ուշադրությունը կենտրոնացնի գլխավորի վրա, և այդ դեպքում տերը չի հաղթի:

Թալանի բերրի արտերը, որպեսզի զորքի համար առատ պարեն ունենաս: Ուշագիր հետևիր քո ռազմիկների բարեկեցությանը, մի հոգնեցրու նրանց, ոգին ամրացրու և նրանց ուժերը կուտակիր: Զորքը շարժիր հաշվարկով և ծրագրի համաձայն, այնպես արա, որպեսզի հակառակորդը չկարողանա (կռահել) քո դիտավորությունները: Ռազմիկներիդ այնպիսի տեղում կանգնեցրու, որտեղ ելք չկա, այդ դեպքում նրանք կնախընտրեն մահը փախուստից, (իսկ) եթե նրանք պատրաստ են մեռնելու, ինչպես չհասնել հաղթանակի: Հրամանատարներն ու մյուսները նման դրություն ժամանակ լարում են իրենց բոլոր ուժերը: Երբ զորքը գտնվում է կործանման եզրին, (այն ժամանակ) նա ամուր կանգնում է (դիմակայում է): Երբ նա գտնվում է խորքում (հակառակորդի երկրի), նրան ոչինչ չի պահում: Երբ ելք չկա, նա (զորքը) անզիջում կռվում է:

Ուստի, քո զորքերն առանց հրամանի էլ զգուշ կլինեն, առանց պահանջելու՝ կատարող, առանց համոզելու՝ համերաշխ, առանց հրամանի՝ հավատարիմ:

Արգելեք հավատալ նախանշաններին, վերացրեք կասկածները, մինչև մահ մի երկյուղեք աղետներից:

Եթե ձեր ռազմիկների մոտ ավելորդ փող չկա, դա չի նշանակում, որ նրանք հարստություն չեն սիրում: Եթե նրանց կյանքը երկարատև չի, չի նշանակում, որ նրանք չեն սիրում երկարակեցությունը:

Այն օրը, երբ հրատարակվում է մարտական հրամանը, նստած հրամանատարների և ռազմիկների արցունքները հոսում են նրանց կրծքին, նրանց մոտ, ովքեր պառկած են, արցունքները հոսում են այտերով, բայց

բավական է, որ նրանք հայտնվեն անելանելի դրուժյան մեջ՝ նրանք կլինեն արի, ինչպես Չժուն և Գուլը²:

Հետևաբար, ով լավ է վարում պատերազմը, նման է Շուայթանին: Շուայթանը՝ Չանշան լեռների օձն է: Երբ նրա գլխին են հարվածում, նա գրոհում է պոչով, երբ հարվածում են նրա պոչին՝ նա հարձակվում է գըլխով, երբ հարվածում են նրա մեջտեղին, նա գրոհում է գլխով և պոչով³:

Համարձակվում եմ հարցնել, կարո՞ղ է արդյոք զորքը նմանվել Շուայթանին: Կասեմ՝ այո: Չէ՞ որ ուժենը և յուժենը թշնամի են միմյանց, սակայն երբ հայտվեն մի նավակի մեջ և սկսեն անցնել գետը և փոթորիկը վրա հասնի՝ նրանք կսկսեն միմյանց օգնել այնպես, ինչպես ձախ ձեռքն օգնում է աջին⁴:

Ուստի, երբ կկապես ձիերին և անիվները (մարտակառքերի) հողի մեջ կթաղես, այնուամենայնիվ, դրա վրա հուշա մի դիր⁵: Երբ բոլորը մի մարդու նման քաջ են՝ ապա միայն այդ ժամանակ հնարավոր կլինի իրականացնել զորքերի իսկական ղեկավարումը:

Ինչպես ուժեղները, այնպես էլ թուլները, կարող են օգտվել տեղանքի օրենքներից: Հետևաբար, ով վարպետորեն է վարում պատերազմը, նա իր զորքի ձեռքից բռնած, ինչպես մի մարդու, դուրս է բերում, թվում է, թե անելանելի դրուժյունից:

Չորքի հրամանատարը պարտավոր է լինել հանգիստ և դրանով ստեղծել անթափանցելիություն, լինել արդարացի և դրանով պահպանել կարգը, կարողանալ հրամանատարների և ռազմիկների աչքերն ու սկանչները մոլորություն մեջ գցել՝ նրանց պահելով անգիտություն մեջ, փոխել իր մտադրություններն ու պլանները, թույլ չտալ, որ որևէ մեկը դրանց մասին որևէ բան իմանա, փոխել իր գտնվելու վայրը, իր համար շրջանցիկ ճանապարհներ ընտրել, և թույլ չտալ, որպեսզի ուրիշներն այս մասին կռահեն:

Ղեկավարելով (զորքը) ճգնաժամային վիճակում, (նրան) զորքին դիր այնպիսի դրուժյան մեջ, ասես թե բարձունք ես բարձրացել և մի կողմ նետել աստիճանները: Երբ զորքը գլխավորելով կխորանաս իշխանների տարածքը՝ ցույց տուր քո վճռականությունը, վառիր նավերը, ջարդիր

կաթսաները⁶, ռազմիկներին դեկավարիո ինչպես ոչխարների հոտը, նրանց քշելով մեկ այստեղ, մեկ այնտեղ, նրանց պահելով անգիտության մեջ: Հավաքելով գորբը մեկ ամբողջության մեջ, նետիր նրանց ամենավտանգավոր տեղերը: Դա է գործի հրամանատարի պարտականությունը:

Տեղանքի ինը տեսակների փոփոխությունները, խտացման և ձգման շահը⁷, մարդկային զգացմունքների օրենքները՝ այդ ամենը պետք է լավ իմանալ:

Օտարերկրացու գործողությունների ուղին ընդհանրապես, եթե հակառակորդի տարածքը շատ ես խորացել՝ կենտրոնացիր գլխավորի վրա, եթե այնքան էլ չես խորացել՝ ցրվածություն է առաջանում:

Երբ հեռանում են իրենց երկրից և գործով անցնում են սահմանը՝ կտրվելու տեղանքն է, երբ չորս կողմը ճանապարհները բաց են՝ մեծ ճանապարհների խաչմերուկների տեղանքն է, երբ այնքան էլ չեն խորանում՝ թեթև (սահմանային) տեղանքն է, երբ թիկունքում թողնում են ամրացված կետեր, իսկ առջևում նեղ անցումներ՝ շրջապատման տեղանքն է, երբ գնալու տեղ չկա՝ մահվան տեղանքն է:

Հետևաբար, սիոված տեղանքում ես բոլորին կբերեմ միասնական նպատակադրվածության, թեթև տեղանքում ես կստիպեմ բոլոր գորամասերին միմյանց հետ սերտորեն կապ պահպանել, վիճարկելի տեղանք ես կգնամ հակառակորդներիցս հետո, բաց տեղանքում ես ուշադիր կլինեմ պաշտպանության նկատմամբ, մեծ ճանապարհների հատման տեղանքում ես կամրապնդեմ կապը դաշնակիցների հետ, լուրջ տեղանքում ես կշարժվեմ ճանապարհով, շրջապատման տեղանքում ես կփակեմ անցումները, մահվան տեղանքում ես ռազմիկներին կներշնչեմ, որ նրանք չեն ապրի:

Ուստի ռազմիկների զգացմունքները հետևյալն են. երբ նրանք շրջապատված են՝ նրանք պաշտպանվում են, երբ ելք չկա՝ նրանք մարտնչում են, երբ դրությունը չափից դուրս վտանգավոր է՝ նրանք հնազանդվում են:

Հետևաբար, ով չգիտի իշխանների մտադրությունները, նա չպետք է նրանց հետ դաշինք կնքի, ով չգիտի տեղանքի ուրվապատկերները՝ լեռների ու անտառների, անդունդների ու կիրճերի, ճահճուտների և ճա-

հիճների՝ նա չի կարող ղեկավարել զորքը, ով չի օգտագործում տեղացի ուղեկցորդներին, նա չի կարող օգտվել տեղանքի առավելություններից:

Ով չգիտի ինը կանոնները, (նրա մոտ) զորքը չի լինի բավանի (հեգեմոնի) զորքը⁸: Եթե հեգեմոնի զորքը պատերազմի գնա մեծ պետություն վրա, ապա չի կարող հավաքել բավականաչափ ուժ, եթե նրա ողջ հզորությունը ուղղված լինի հակառակորդի դեմ, ապա չի կարող դաշինքներ կնքել:

Այդ պատճառով հեգեմոնը չի պայքարում դաշինքների համար Երկնաբարձունքում, չի աջակցում Երկնաբարձունքում ուրիշների իշխանությունների վերելքին, նա հավատում է իր սեփական հզորությանը և ազդում է հակառակորդի վրա իր հզորությամբ: Ուստի նա կարող է գրավել նրանց քաղաքները, ավերել նրանց պետությունները, բաժանում է պարգևներ, չի կառուցում սովորական կանոններից, հրապարակում է հրամաններ՝ հիստեկելով սովորական ղեկավարման կանոններին: Հարձակվում է իր զորքերով, ասես՝ ղեկավարում է մի մարդու, հարձակվելով խոսում է գործերի մասին, չմտնելով մանրամասնությունների մեջ, հարձակվելով՝ խոսում է օգուտի, այլ ոչ թե վնասի մասին:

Այն բանից հետո, երբ զորքին կնետեն մահվան վայրը, նա կապրի, քանի որ, երբ զանգվածները (գինվորները) ընկնում են աղետի մեջ, այդ դեպքում նրանք կարող են վճռել մարտի ելքը:

Ուստի պատերազմի վարումն այն է, որպեսզի տրվելով հակառակորդի նկատառումներին, մանրագնին ուսումնասիրել դրանք, որից հետո անհրաժեշտ է հակառակորդի ուշադրությունը կենտրոնացնել մի ինչ-որ բանի վրա և սպանել զորավարին, եթե անգամ նա գտնվում է 1000 լիից հեռու: Դա նշանակում է՝ գործը հմտորեն ավարտել:

Հետևաբար, զորքերի ղեկավարումն ընդունելու օրը փակիր սահմանային անցարանները, արգելիլ պատվիրակների շփումները արտասահմանի հետ: Թող տիրակալը ղեկավարի արքունի խորհրդին և պատերազմական գործերի համար պատասխան պահանջի իր զորավարից:

Եթե (նկատես, որ) հակառակորդը բացվում և փակվում է, անպայման սրընթաց ներխուժիլ նրա մոտ⁹: Առաջին հերթին գրավիր այն, ինչն

արժեքավոր է նրա համար և հանգիստ սպասիր նրան: Գնա հաստատված կանոնների ուղիով և հետևիր հակառակորդին: Նման միջոցներով կվճռես պատերազմը:

Ուստի սկզբում եղիր ամոթխած, ինչպես կույսը, և հակառակորդը կբացի դռները, հետո եղիր արագ, ինչպես նապաստակը, և հակառակորդը չի հասցնի դիմադրություն ցույց տալ:

ՔԼՈՒԽ ՏԱՄԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Հարձակում կրակով (խոզուն)

Սուն Յըզին ասաց. սովորաբար կրակով հարձակվելու հինգ եղանակ կա. առաջին՝ երբ վառում են մարդկանց, երկրորդ՝ երբ հրդեհում են պալատները, երրորդ՝ երբ վառում են գումակը, չորրորդ՝ երբ հրդեհում են պահեստները, հինգերորդ՝ երբ վառում են ջոկատները:

Կրակով գործելու համար անհրաժեշտ է առաջնորդվել քո խնդրով, և անպայման պետք է առկա լինեն հրդեհման անհրաժեշտ միջոցները: Կրակի օգտագործման հարմար պահին կրակ տալու համար ընտրում են հարմար օր: Ժամանակը հարմար է, երբ եղանակը չոր է, (իսկ) օրը հարմար է, երբ հայտնվում են Յըզի (մաղ), Բի (պատ), Ի (թև), Չժեն (արգելք) համաստեղությունները: Այս չորս համաստեղությունների օրերին եղանակը, սովորաբար, քամոտ է:

Կրակով հարձակվելիս սովորաբար ընտրում են կրակով հարձակվելու հինգ եղանակներից մեկը և հետևում նրան: Երբ կրակը բռնկվում է ներսում, անհրաժեշտ է նրան աջակցել դրսից: Երբ կրակը բռնկվում է, սակայն հակառակորդի ռազմիկները հանգիստ են, համբերատար սպասիր և մի հարձակվիր: Երբ կրակի ուժը հասնում է գագաթնակետին՝ հետևիր նրան, եթե կարելի է հետևել՝ մնա տեղում: Երբ կարելի է հրդեհել դրսից, մի սպասիր նրան դրա ներսում, ընտրիր ժամանակը և հրդեհիր: Երբ

հրդեհումն իրականացվում է քամու ուղղությունամբ, մի հարձակվիլի քամուն ներհակ: Երբ ցերեկը քամին երկար է փչում՝ երեկոյան այն թուլանում է:

Ընդհանրապես, պատերազմում պարտադիր է գիտենալ կրակով հարձակվելու հինգ տեսակները և մշտապես պաշտպանվել նրանցից: Հետևաբար, հարձակմանը կրակին ցույց տված օգնությունը հասկանալի է, հարձակմանը ջրի օգնությունը առավել ուժեղ է: Զրով կարելի է խափանել, սակայն նրանով գրավել չի կարելի:

Երբ ճակատամարտով ցանկանում ես հաղթել, հարձակումով ցանկանում ես գրավել, նման դեպքում, շօտագործելով այդ միջոցները (հարձակում կրակով և ջրով), կստացվի աղետ, (որը) կոչվում է «տևական ծախսեր»: Ուստի ասում են. խելացի տիրակալը հոգում է այդ միջոցների մասին, իսկ լավ զորավարը օգտագործում է դրանք:

Եթե շահ չունես, մի առաջացիր, եթե չես կարող ձեռք բերել, (ապա) զորքը գործողության մեջ մի մտցրու, եթե վտանգ չկա՝ մի պատերազմիր: Տիրակալը չպետք է զորքը բարձրացնի զայրույթի պատճառով, զորավարը մարտի մեջ չպետք է մտնի ռիսի պատճառով: Շարժվում են, երբ դա շահավետ է, երբ դա շահավետ չէ՝ մնում են տեղում: Զայրույթը կարող է փոխվել ուրախության, չարությունը կարող է փոխվել խնդության, սակայն կործանված պետությունը չի կարելի կրկին վերածնել, մահացածներին չի կարելի վերակենդանացնել:

Ուստի խելամիտ տիրակալը զգույշ է պատերազմի նկատմամբ, իսկ լավ զորավարը կանխում է այն: Դա է պետությունը պահպանելու, իսկ զորքն անվնաս պահելու ուղին:

ՓՈՒԽ ՏԱՍԵՐԵՔԵՐՈՐԴ

Հետախույզների օգտագործումը

(Յուլյուսյան)

Սուն Յրզին ասաց. ընդհանրապես, երբ ոտքի են հանում հարյուր հազարանոց զորք և այդ զորքը արշավում է 1000 լիից ավելի, ժողովրդի ծախսերը, տիրակալի ծախսերն օրական կազմում են 1000

ցըզին (ոսկի): Ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս հուզումներ են առաջանում: 700000 ընտանիքներ բեռնափոխադրման պարհակների հետևանքով ուժասպառ են լինում և չեն կարողանում զբաղվել իրենց աշխատանքով:

Միմյանցից պաշտպանվում են մի քանի տարի, իսկ հաղթանակը վճռվում է մեկ օրվա ճակատամարտով, և դրա համար խնայել տիտղոսներ, մի քանի հարյուր ցըզի (ոսկի) պարգևներ և միլենույն ժամանակ չիմանալ հակառակորդի դրուժյունը, (ապա) դա անմարդկայնության բարձրագույն սահմանն է¹:

Ով նման կերպ է գործում, մարդկանց հարմար զորավար չէ, իր տիրակալի համար օգնական չէ, հաղթանակի տիրակալը չէ:

Ուստի խելամիտ տիրակալը և իմաստուն զորավարը շարժվում և հաղթում էին, սխրանքներ էին գործում՝ գերազանցելով սովորական մահկանացուներին միայն այն պատճառով, որ նրանք կանխավ ամեն ինչ գիտեին:

Գիտելիքները չի կարելի վաղօրոք ստանալ դեերից և աստվածներից, չի կարելի ստանալ գործերում ընդօրինակելուց, չի կարելի ստանալ շահույթների և հաշվարկների ուղիով: Հակառակորդի դրուժյան մասին գիտելիքներն անպայման ստանում են մարդկանցից²:

Հետևաբար օգտագործում են հինգ տեսակի հետախույզների՝ կան տեղական հետախույզներ, կան ներքին հետախույզներ, կան վերադարձող հետախույզներ, կան մահվան հետախույզներ, կան կյանքի հետախույզներ:

Երբ հինգ կատեգորիաների հետախույզներն աշխատում են, (ապա) ոչ ոք չգիտի նրանց ուղիները: Այդ կոչվում է աստվածային գաղտնիք: Նրանք պետություն համար թանկարժեք զարդեր են:

Տեղական հետախույզներին հավաքագրում են հակառակորդի տեղացի բնակիչներից և օգտագործում են նրանց, ներքին հետախույզներին հավաքագրում են աստիճանավորներից և օգտագործում են նրանց, մահվան հետախույզները նրանք են, երբ կատարելով որևէ խաբեություն, ես այդ մասին տեղեկացնում եմ իմ հետախույզներին, իսկ նրանք

այդ մասին հայտնում են հակառակորդին, կյանքի հետախույզները նրանք են, ովքեր վերադառնում են հակառակորդի մասին տեղեկություններով:

Ուստի գործերում չկան այնպիսի սերտ հարաբերություններ, ինչպես հետախույզների հետ, չկան ավելի առատաձեռն պարգևներ, ինչպես հետախույզների համար, հետախույզների գործերից չկան առավել գաղտնի գործեր:

Բազմակողմանի գիտելիքների շտիրապետելով, չես կարող օգտագործել հետախույզներին, շտիրապետելով հումանիզմին և արդարացիությունը, չես կարող հետախույզներ ուղարկել, շտիրապետելով նրբանկատություն և դիտողականության՝ հետախույզներից չես կարող ստանալ օգտակար տեղեկություններ: Օ՛ր, նրբություն: Նրբություն: Չկա ոչինչ, որում կարելի չլինի օգտագործել հետախույզներին³:

Եթե որևէ հետախույզական տեղեկություն դեռևս չի ուղարկվել, իսկ նրա մասին արդեն հայտնի է դարձել, ապա հետախույզը և նա, ում այդ տեղեկությունը հայտնի է դարձել՝ սպանվում են:

Ընդհանրապես, երբ ցանկանում ես հարվածել հակառակորդի գործին, սպանել նրա մարդկանցից որևէ մեկին, անպայման նախապես իմացիր զորավարի պահակախմբի (մարդկանց) անունները, նրա (զորավարի) մերձավոր օգնականներին, մշտական այցելուներին, բարապաններին: Հրամայիր քո հետախույզներին՝ անպայման պարզեն այդ ամենը⁴:

Նկատելով քեզ մոտ հակառակորդի հետախույզի հայտնվելը, շահով գրավիր նրան քո կողմը, տար քեզ մոտ և տեղավորիր քո տանը: Այդ դեպքում կարելի է ձեռք բերել վերադարձող հետախույզի և օգտագործել նրան: Նրանից դու շատ բան կիմանաս: Ուստի կարելի է ձեռք բերել տեղական և ներքին հետախույզների և ուղարկել նրանց (հակառակորդի մոտ): Հետևաբար, մի ինչ-որ բան հնարելով (կեղծ տեղեկություն) դու կարող ես ստիպել քո մահվան հետախույզներին հազորդել այդ մասին հակառակորդին: Նրանից դու շատ բան կիմանաս:

Ուստի կյանքի հետախույզներին կարելի է ստիպել գործել քո մտադրությունների համաձայն:

Այս բոլոր հինգ կատեգորիաների հետախույզների գործերը տնօրինում է տիրակալը: Հակառակորդի մասին ամեն ինչ իմանում են վերադարձող հետախույզների միջոցով: Ուստի վերադարձող հետախույզների նկատմամբ պետք է հատկապես առատաձեռն լինել:

Հնում Ին թագավորությունն իր բարձրացմամբ պարտական է կուՅահին, որը ծառայում է իր Ինի գլխավորության ներքո: Ուստի միայն լուսավորյալ տիրակալները և իմաստուն զորավարները կարող են իրենց համար հետախույզներ դարձնել (միայն) լայնածավալ գիտելիքներ ունեցող մարդկանց և դրանով մեծ գործեր կատարել⁵:

Հետախույզներն անհրաժեշտ են հատկապես պատերազմի ժամանակ: Նրանք այն հենարանն են, որի օգնությամբ շարժվում է գործը⁶:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I գլխի ծանոթագրությունները

1. Երկի սկզբում Սուն Յըզին պատերազմը դիտարկում է նրա արդյունքներով և պետության համար կարևոր նշանակությամբ: «Պատերազմը՝ պետության համար մեծ գործ է»: Այն վտանգավոր քայլ է, քանզի պատերազմի միջոցով որոշվում է «կյանքի և մահվան» հարցը: Այդպիսի կանխազգացումն ունի կոնկրետ իմաստ: Արևելյան Չժոուի թագավորության դարաշրջանում (մ.թ.ա. 770-249թթ.) իշխանությունների միջև անընդհատ երկպառակտչական պատերազմներ էին մղվում: Շատ հաճախ պատերազմն ավարտվում էր կռվող իշխանություններից մեկի կործանումով: Այսպես օրինակ՝ Ու իշխանությունում, որտեղ Սուն Յըզին մ.թ.ա. VI դարի վերջին զորավար էր, մ.թ.ա. 529թ. գրավեց Չժոու-լայ իշխանական կալվածքը և էլի մի քանի իշխանությունների տարածքներ: Ուստի դա էր պատճառը, որ Սուն Յըզին նախագգուշացնում էր, որ «այդ հիմնական դրույթն անհրաժեշտ է հաստատապես իմանալ»:

2. Դատ (ուղի): Հին Չինաստանում Ուղին հասկանում էին ոչ միայն կոնկրետ իմաստով՝ ուղի, ճանապարհ, այլև, ի նկատի ունենալով դրա վերացական նշանակությունը՝ կյանքի ուղի, հասարակական կյանքի առանձին կողմերի ընդհանուր ուղղություն: Սուն Յըզին «ուղի» հասկացության մեջ ներդնում է նեղ մասնագիտական նշանակություն: Նա գտնում է, որ պատերազմել կարելի է միայն այն ժամանակ, երբ հասարակական կյանքում առկա է ներքին համաձայնություն, միասնություն տիրակալի և ժողովրդի միջև: Այնպիսի միասնություն, որ ժողովրդի մոտ որևէ կասկած չլինի իր տիրակալի գործողությունների ճշմարտացիության մեջ, որպեսզի ժողովրդի կողմից լինի ամբողջական, անառարկելի հնազանդություն իր տիրակալին: Այսպիսով, Սուն Յըզին ընդունում է, որ ժողովուրդը կենդանի ուժ է, որը պատերազմի պայմաններում գլխավոր գործոնն է:

3. Տյան (երկինք): Սուն Յըզին համառոտ պարզաբանում է նրա նշանակությունը՝ դա տարվա տարբեր եղանակներն են, կլիմայական պայմանները, եղանակը, ցուրտը, շոգը, օրերի հերթափոխումը և այլն: Չինաստանի կլիմայական պայմաններուն գերակշռում են մուսոնները, որոնք ամռանը փչում են հարավ-արևելքից (այսինքն՝ ծովից ցամաք), և մեծ քանակությամբ խոնավություն են բերում, ուստի գարնանից տեղում են անձրևներ: Ամռանը շոգ և անձրևային է: Տարվա լավագույն եղանակը՝ աշունն է: «Սիմա Ֆայի» («Սիմի օրենքները») ռազմական երկում ասված է. «Ձմռանն ու ամռանը» (դաժան սառնամանիքներին և ուժեղ շոգերին) գործը ոտքի չեն հանում, որովհետև խնայում են իրենց ժողովրդին»:

4. Դի (երկիր): Նշանակում է աշխարհագրական պայմաններ: Սուն Յըզին ժամանակ երկիրը կուսական տեսք ունեք: Գետերը, որոնց ոչինչ չէր պահում, հեղեղում էին ցածրավայրերը, անանցանելի ճահիճները տարածքի նշանակալից մասն էին կազմում (հատկապես ներկա Յըզյանսու գավառում և Անհուեյ գավառի արևելյան մասը: Այս վայրերում է գործել Սուն Յըզին՝ Ու իշխանության գործի հետ), խիտ անտառներն աճում էին ամենուր, խոտը ծածկում էր անտառներից ազատ տա-

րածույթյունները: Հարուստ էր նաև երկրի կենդանական աշխարհը: Աստիճանաբար մարդն իր աշխատանքով, դարերի ընթացքում փոխեց երկրի տեսքը:

Սուն Յըզին պատահական չէ, որ հիշատակում է «մահվան տեղանքի» մասին: Տեղանքի որոշ տեսակներ (նրանք մանրամասնորեն թվարկված են 10-րդ և 11-րդ գլուխներում) կարող են վճռորոշ լինել այնտեղ պատերազմող կողմերի համար:

Իսկ մյուսները՝ «կյանքի տարածքները», խելամտորեն օգտագործելու դեպքում, հասնում են շոշափելի արդյունքների: Հետևաբար, պատերազմին նախապատրաստվողը պետք է գիտենա ռազմաթատերաբեմի աշխարհագրական պայմանները:

Սուն Յըզիի երկի մեկնաբան Դու Մունը հետևյալ պարզաբանումն է տալիս. «Յուրաքանչյուր զորահրամանատար անպայման, վաղօրոք, պետք է մանրակրկիտ ծանոթանա տեղանքի քարտեզին: Նա անպայման պետք է կատարելապես իմանա (բոլոր) վտանգավոր վայրերը, մարտակարգերի անցման վայրերը, այն գետերը, որոնցով կարող են անցնել մարտակառքերը, լեռների անվանումները, հովիտները, այն վայրերը, որտեղ փարթամորեն խոտ է աճում, ճանապարհների երկարույթյունը, քաղաքային պատերի չափերը, քանդված քաղաքները, այգիների և բանջարանոցների համար նախատեսված վայրերը: Այս ամենը (զորավարը) պետք է պարտադիր իմանա, ինչպես նաև ռելիեֆը, սահմանների սկիզբն ու վերջը: Զորավարն այդ ամենը պահում է իր հիշողության մեջ և միայն այդ դեպքում նա չի կորցնի տեղանքի առավելությունը»:

5. Յըզյան (զորավար): Սուն Յըզին զորավարի սուբյեկտիվ հատկանիշներին մեծ նշանակություն է տալիս, գտնելով, որ նրանք են որոշում պատերազմի ընթացքն ու ավարտը: Սուն Յըզին թվարկում է հինգ հատկանիշներ, որոնցով պետք է օժտված լինի զորավարը: Ինչ Յան-սին հետևյալ կերպ է բացատրում այդ հատկությունները. «Եթե զորավարն անխելք է, նա չի կարող գնահատել հակառակորդին և համապատասխան մարտավարություն մշակել, եթե նա արդարացի չէ, չի կարող հրամայել ուրիշներին և իր ետևից տանել իր ենթականերին, եթե նա մարդասեր չէ,

(ապա) չի կարող իր (կողմը) գրավել զանգվածներին և իրեն կապել ռազմիկներին, եթե նա քաջություն չունի, ի վիճակի չի լինի կատարել որևէ գործողություն և մարտի մեջ մտնել, եթե նա խիստ չէ, չի կարող իրեն ենթարկել ուժեղին և ղեկավարել զանգվածներին: Ով որ ամբողջությամբ տիրապետում է այդ հինգ հատկանիշներին, նա զորավարի մարմնավորումն է»:

Սուն Յըզիի երկի մեկնաբան Հուանշի գունը («Երեք մարտավարություն» երկի հեղինակ, մ.թ.ա. 3-րդ դար) հետևյալ կերպ է գնահատում զորավարին. «Նա, ով քաջ է, սիրում է իրականացնել իր կամքը, նա ով հիմար է, չի մտածում իր մահվան մասին: ... Մարդիկ դատում են զորավարի մասին, դիտելով նրա քաջությունը: Քաջությունը զորավարի միայն մի կողմն է: Չէ՞ որ քաջն անպայման մարտի մեջ կմտնի՝ չգիտենալով շահը, (այդպիսի մարդը) չի կարող զորավար լինել»:

Սուն Յըզիի երկի բոլոր մեկնաբաններն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում զորավարի բարոյահոգեբանական կերպարին՝ շեշտը դնելով նրա հավասարակշռված լինելու վրա: Եթե զորավարը չունի վերը նշված հատկանիշները, ապա հակառակորդը կարող է ճարպկորեն օգտագործել դրանք ի օգուտ իրեն: Դու Մունը պարզաբանում է. «Եթե թշնամին այդպիսին է (բռնկվող բնավորություն ունի), կարելի է նրան խիստ վիրավորել, այնպես անել, որ նա թեթևամտորեն առաջ շարժվի»:

Զորավարի մեկ այլ հատկությունը՝ հումանիզմը ևս կարելի է օգտագործել օգուտ քաղելու համար: Կի Յյուանն այդ առիթով նկատել է. «Հարձակվիր այն բանի վրա, ինչը նա (զորավարը) սիրում է: (Այդ դեպքում) նա գեներ կշռջի (և) անպայման կշտապի պաշտպանել այն, ինչն ինքը սիրում է: Այդպիսի մարդուն կարելի է հաշվենկատորեն ուժասպառ անել»:

Իսկ մեկ այլ մեկնաբան՝ Յաո-գունը, կոնկրետ պարզաբանում է կատարում. «Հայտնվիր այնտեղ, ուր նա (զորավարը) անպայման կսլանա: Եթե նա այդպիսին է (սիրում է ժողովրդին), անպայման կգնա նրան օգնության արագացված ռազմերթով: Եթե նա սկսի փրկել, ապա կհոգնի»:

6. Ֆա (օրենք): Խոսքը գնում է օրենքի ոչ թե մի ինչ-որ վերացական հասկացություն մասին: Սուն Յըզին այստեղ տալիս է կոնկրետ բացատ-

րուծյուն. օրենքը՝ զինվորական կարգ ու կանոնն ու կարգապահու-
թյունն է, զորքերի ղեկավարումն ու զորքերի մատակարարումը: Այսպի-
սով, պատերազմը պահանջում է, որպեսզի զորքերում լինի պատշաճ շա-
րային կարգ ու կանոն ու կարգապահուծյուն, որպեսզի հրամանատա-
րուծյան դրվածքը ճիշտ լինի, և որպեսզի զորքերը ժամանակին մատա-
կարարվեն անհրաժեշտ ամեն ինչով:

7. «Կանոնների և հրամանների կատարումը» նշանակում է են-
թարկվել կարգապահուծյան պահպանմանը: Վեյ Լյաո-Յըզիի ռազմար-
վեստին նվիրված երկից (Վեյ Լյաո-Յըզի, մ.թ.ա. 4-րդ դար) տեղեկանում
ենք, որ շինական զորքերում, կարգապահուծյունը պահպանելու համար,
գոյուծյուն ունեն խմբակային երաշխիք: Յուրաքանչյուր ստորաբաժա-
նումում , մարտիկներից մեկի կատարած հանցանքի համար պատաս-
խանատու էին բոլորը՝ ընդհուպ մինչև մահապատիժ: Դու Մունը հե-
տևյալ օրինակն է վկայակոչում, որը ցայտուն կերպով գալիս է հաստա-
տելու վերը նշվածը: Ու Յինը (նշանավոր զորավար, ռազմական տեսա-
բան և քաղաքական գործիչ, մահացել է մ.թ.ա. 381 թ.) կովում էր ցիների
(իշխանուծյուն մ.թ.ա. 403-221թթ) դեմ: Մարտը դեռ չէր սկսվել, երբ Ու
Յինի զինվորներից մեկը, չկարողանալով զսպել իր քաջուծյունը, առաջ
նետվեց և սպանելով թշնամիներից երկուսին, նրանց գլուխներով ետ
վերադարձավ: Զորավարը հրամայեց նրան մահապատժի ենթարկել:
Սպաները մոտենալով Ու Յինին, սկսեցին համոզել նրան. «Դա տաղան-
դավոր ռազմիկ է, չի կարելի նրան մահապատժի ենթարկել»: Ու Յինն ա-
սաց. «Հավատում եմ, որ տաղանդավոր զինվոր է, սակայն նա գործել է
առանց հրամանի»: Այդ ժամանակ նրան գլխատեցին:

8. Թվային գերազանցուծյունն ինքնին խոսում է իր մասին: Սուն
Յըզիի հայտարարուծյան համաձայն , դա այն ցուցանիշներից է, որը
վճռում է հաղթանակն ու պարտուծյունը:

9. Երկում հանդիպում են տերմիններ, որոնք նշանակում և իմաս-
տավորում են զինվորների տարբեր կատեգորիաներ. ցզու՝ ռազմիկներ,
զինվորներ, շի՝ կրտսեր հրամանատարներ (սերժանտներ), լի, դալի՝ ա-
վագ հրամանատարներ, ցըզյան՝ առաջապահ զորքերի հրամանատար,

բինցրգյա՝ զինվորական մասնագետներ, բին՝ զորքերի շարային կազմը, չժու՛ն՝ զորքերի ոչ շարային կազմը, դայցցյա՝ զրահակիր զինվորներ, ցգյան՝ հետախույզ, լրտես:

10. «Հրամանատարների և զինվորների պատրաստականության» մասին արտահայտիչ կերպով խոսում է Ու Յրզին. «Մարդիկ սովորաբար մահը գտնում են այն պատճառով, որովհետև հմուտ չեն, պարտություն են կրում, որովհետև չեն կարողանում հաջողությամբ գործել: Այդ իսկ պատճառով, զորքերի ղեկավարման մեջ ամենազխտավորը պատրաստվածությունն է»: Բացատրելով պատրաստականության բովանդակությունը, Ու Յրզին ասում է. «Սովորեցրու շարժվել շրջանով և քառանկյունով (քառե), նստել և վեր կենալ, հավաքվել և ցրվել»: Այգպիսին էին հին չինական բանակում շարային պատրաստվածության տարրերը: Մեն Յրզին իր գրքում նշում է, որ աղեղից կրակելու համար գոյություն ունեին ժողովրդական դպրոցներ, որոնք կոչվում էին «սյուչ»: Բարձրագույն դպրոցներում, որտեղ սովորում էին ազնվատոհմիկների և հասարակ մարդկանց երեխաները, սովորեցնում էին՝ հանդիսակարգ, աղեղից կրակել, ձիեր ղեկավարել, և գրագրություն: Աղեղից կրակելու ծրագիրը բաղկացած էր հինգ բաժիններից՝ բայշեն (հասարակ նետաձգություն), ցանլյան (խմբային նետաձգություն), յանչժու, սյանչի և ցզիննի (նետաձգություն մարտակառքով):

11. Պարզևատրումների և պատիժների համակարգին Հին Չինաստանում ռազմական տեսաբանները էական նշանակություն էին տալիս: Նրանք գտնում էին, որ արդարացի համակարգը զորավարի լավագույն միջոցն է զորքի վստահությունը ձեռք բերելու և նրա մարտունակությունը բարձրացնելու համար:

12. Այգպիսով, պատերազմի այդ յոթ հաշվարկներում նշվում են ռազմավարության հիմնական գծերը՝ ժողովրդի բարոյական վիճակը, զորավարի տաղանդը, ժամանակը, տարածությունը, բանակի կազմակերպումը, զորքերի թվաքանակը, կարգապահությունը, նախապատրաստվածությունը և պատիժների համակարգը:

13. Սունն Յրզիին առաջարկում է օգտվել յոթ հաշվարկներից՝ հաշվի առնելով շահը: Երկում նա բազմիցս խոսում է ռազմավարության և մարտավարության առավելության (շահի) նշանակության մասին, որը հաջող պատերազմի անհրաժեշտ պայմանն է: Մեկնաբան Դու Մունն հաստատում է այդ սկզբունքը, ասելով. «Ողջ զինվորական գործի առաջնային հիմքը՝ օգուտի և վնասի հաշվառումն է»: Այդ պատճառով, Սունն Յրզիին հայտարարում է, որ օգտագործելով իր հաշվարկներն օգուտին համապատասխան, կստեղծեն պայմաններ, որոնք դուրս կգան այդ հաշվարկների սահմաններից, այսինքն՝ հնարավորություն կտան մարտական բազմազան իրադրություն մեջ գտնել ճիշտ որոշում:

14. Մարտական հնարքների բաժինը Սունն Յրզիին սկսում է հետևյալ պնդմամբ. «Պատերազմը՝ խաբեության ուղին է»: Հաշվի առնելով թվարկված մարտավարական 13 հնարքները, պատերազմում խաբեությունը հասկանալ ռազմական խորամանկություն՝ հակառակորդին հաղթելու մեթոդ: Այդ 13 մարտական հնարքները կարելի է խմբավորել ըստ տեսակների՝ մարտական քողարկում (թվացող թուլության քողարկում, տարածության քողարկումը կեղծ պաշտպանություն), նախագգուշական միջոցառումներ (հակառակորդի գերազանց ուժերին ուժասպառ անելը, հակառակորդի գերակշիռ ուժերից խուսանալը), հակառակորդի թերություններից և սխալներից օգտվելը (հակառակորդի անպատրաստվածության օգտագործումը, նրա զգոնության թուլացումը, անզգուշությունները), հակառակորդի գորքի վրա ազդելը (նրա շարքերը քայքայել, պառակտում առաջացնել նրա շարքերում), հակառակորդի հոգեկանի վրա ազդելը (դրդել չմտածված, վտանգավոր ձեռնարկումների, բթացնել նրա զգոնությունը): Այս բաժնում Սունն Յրզիին թվարկում է ընդհանուր մարտավարական հնարքներ: Մարտավարության կոնկրետ տեսակները նրա կողմից մշակվել են III, V, VII, IX, X, XI գլուխներում:

15. Սունն Յրզիին գտնում է, որ թվարկված մարտավարական հնարքներով զորավարը կարող է հասնել հաղթանակի: Սակայն որ հնարքը, ինչ պայմաններում և երբ կիրառել, վաղօրոք ասել հնարավոր չէ, քանի որ պատերազմում իրադրությունը բազմազան և փոփոխական է: Բազ-

մատեսակ իրադրությունում պատրաստի օրինակ նախատեսել հնարավոր է: Ամեն ինչ կախված է զորավարից, նրա հմտությունից և փորձառությունից, որպեսզի, ելնելով համապատասխան իրադրությունից, կարողանա կիրառել մարտավարական այս կամ այն հնարքը:

Սուն Յըզի երկի բազմաթիվ մեկնաբաններ մանրամասն բացատրում են, թե ինչպես են հասկացել Սուն Յըզիի դրույթները ռազմական խորամանկության մասին: Ստորև բերենք դրանցից մի քանիսը՝ Յաո Գուն. «Պատերազմում չկա մշտական ձև՝ պատերազմի արվեստը կայանում է խաբեության մեջ: Մեյ Յո-չեն. «Առանց խաբելու չի կարելի օգտագործել մարտավարական զորաշարժ, առանց մարտավարական զորաշարժի անհնար է հաղթել հակառակորդին»:

Վան Չժե. «Խաբեությունը մի միջոց է հակառակորդի նկատմամբ հաղթանակ տանելու համար»:

Չժան Յույ. «Պատերազմի հիմքում ենթադրում են հումանիզմն ու արդարությունը, սակայն, որպեսզի հաղթանակ տանես, անպատճառ անհրաժեշտ է խաբեությունը»:

II գլխի ծանոթագրությունները

1. Խոսելով զորքերի քանակության և նրանց լրակազմության մասին, Սուն Յըզին սահմանափակվում է միայն կարճ տվյալներով, ենթադրելով, որ ընթերցողներին հայտնի են զորքի կազմակերպման և կազմի մանրամասները:

Հետևակի գլխավոր մարտական ուժը դայցզաներն էին՝ սառը զենքից զրահով պաշտպանված նետաձիգ զինվորները: Զրահը պատրաստված էր կաշվից, որի վրա ամրացված էին բամբուկի կամ էլ բրոնզի գլխիկներ կամ թեփուկներ:

2. Չժոխոու՝ ինքնուրույն իշխանությունների տարբեր աստիճան ունեցող իշխաններ, որոնք մտնում են Չժոու հարստության մեջ: Նրանք անընդհատ երկպառակտչական պատերազմներ էին վարում իրենց տիրապետությունը հաստատելու և իրենց տարածքներն ընդլայնելու համար: Հզոր իշխանություններն իրենց էին հպատակեցնում թուլերին:

3. Օրենքի համաձայն, գյուղացիները պարտավոր էին պատերազմի ժամանակ երկու անգամ տրամադրել պարեն և կեր. առաջին անգամ, երբ զորքերը գնում էին արշավի, երկրորդ անգամ, երբ վերադառնում էին:

4. Երկարատև պատերազմը հղի է մահացու հետևանքներով՝ ուսմական, ֆինանսական, տնտեսական և քաղաքական տեսակետից: Տևական պատերազմի դեպքում «զենքը բթանում է, և սուր ծայրը ջարդվում է»: Ուղղակի իմաստով այդ արտահայտությունը խոսում է մարտական սպառազինությունից սպառվելու, հատնելու մասին: Այս արտահայտությունը կարելի է հասկանալ նաև փոխաբերական իմաստով, որը նշանակում է, որ երկարատև պատերազմի ընթացքում թուլանում է զորքի մարտական ոգին: Յգի լին այդ առիթով ասում է. «Եթե զենքի սուր ծայրը ջարդվել է, զինվորները վերքերի մեջ են, ձիերը՝ հոգնած, նշանակում է, որ ուժերը քայքայվել են»: Իսկ Չժան Յույը տալիս է հետևյալ մեկնաբանությունը. «Երբ պատերազմը երկար են վարում և դրանից հետո հաղթում են՝ զինվորները հոգնում են և նրանց մոտ ոգին ընկնում է»:

Երկարատև պատերազմը, ֆինանսական տեսակետից, քայքայիչ ազդեցություն է ունենում պետական գանձարանի համար, քանի որ ստիպված են օրական 1000 ցզին (ոսկի) ծախսել:

Տևական պատերազմի ընթացքում երկրի տնտեսությունն անկում է ապրում: Տնտեսական ողջ ծանրությունն ընկնում է գյուղի վրա: Ժողովուրդը պատերազմի պատճառով կորցնում է ունեցվածքի 70 տոկոսը: Պատճառները հետևյալն են. առաջին՝ «զորքի համար պարենը հեռվից են բերում և դրա հետևանքով ժողովուրդն աղքատանում է», քանի որ կտրված է լինում իր զբաղմունքից՝ հողագործությունից, երկրորդ՝ պատերազմի ժամանակ ուժեղանում է սպեկուլյացիան, քանի որ «զորքի մոտ ապրող բնակչությունն ամեն ինչ վաճառում է թանկ, երբ ամեն ինչ թանկ է վաճառվում, ժողովրդի ունեցվածքը սպառվում է»: XIII գլխում Սուն Յըզին, խոսելով պատերազմի հետևանքների մասին, եզրակացնում է, որ «700000 ընտանիքներ բեռնափոխադրման պարհակների հետևանքով ուժասպառ են լինում, և չեն կարողանում զբաղվել իրենց աշ-

խատանքով»։ Գյուղատնտեսությունը սկսում է անկում ապրել, որն սպառնում է իշխանին սննկացնել։

5. Որոշ պատմաբաններ տալիս են հին չինական գորքերի սպառազինություն նկարագրությունը։ Չժոու՝ կոնաձև սաղավարտ, պատրաստվում էր ուռենու ճյուղերից և բամբուկից։ Դունբի, լու՝ մեծ և փոքր վահաններ, որոնք պատրաստվում էին հնդկական եղեգնից և ուռենու ճյուղերից, որոնք գալարաձև գործվում էին կենտրոնի շուրջը և աչքի էին ընկնում բավարար ամրությունով։ Նու՝ աղեղ, պատրաստվում էր թեղիից և բամբուկից։ Մետաքսյա աղեղալարերը ձգելու համար անհրաժեշտ էր 30-40 կիլոգրամի հավասարազոր ուժ։ Շի՝ նետ, պատրաստվում էր 0,915 մետր երկարություն ունեցող կեշու ճյուղերից։ Ցզի՝ նիզակ, ուներ բրոնզե ծայրակալ, որի երկարությունը 0,3 մետր էր, իսկ կոթի երկարությունը՝ 3 մետր։

6. Սուն Յըզին ռազմիկների մարտական հատկություններից՝ կատաղության կողքին նշում է նաև ազահությունը՝ զավթելու և թալանելու ձգտումը։ Այս հանգամանքը բնութագրական է այն ժամանակվա պատերազմների համար։

III գլխի ծանոթագրությունները

1. Չժոու հարստության տիրապետության տարիներին չինական գորքը կազմված էր հետևյալ ստորաբաժանումներից. ու՝ հինգ մարդ, լյան՝ 25 հոգի, ցըզու՝ 100 հոգի, լյույ՝ 500 հոգի, շի՝ 2500 հոգի, ցզյուն՝ 12500 հոգի։ Մեկնաբան Յաո գունի տվյալների համաձայն, ցզու ստորաբաժանումը կազմված է եղել 100-500, իսկ ու ստորաբաժանումը՝ 5-100 մարդուց։

Գուն տիտղոս և դագու կոչվող իշխաններն իրավունք ունեին կազմավորել սանցզյուն (երեք բանակ, 37500 թվակազմով), խոու և բո տիտղոսակիր իշխանները, որոնք կոչվում էին չժունգո, ձևավորում էին էրցզյուն (երկու բանակ, 25000 թվակազմով), սյոգու կոչվող ցզի և նան իշխաններն իրավունք ունեին կազմել իցզյուն (մեկ բանակ, 12500 մարդ)։ Չինաստանի կայսրի բանակը՝ լյուցզունը, բաղկացած էր վեց բանակներից։

րից՝ 75000 մարդ: Մի շարք մեկնաբանություններում նշվում է, որ գուն և խոու տիտղոսակիր իշխաններն իրենց բանակում ունեցել են 1000 թեթև մարտակառք: Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր մարտակառքին հասնում էր շարային և ոչ շարային կազմ, թվով 100 հոգի, հետևում է, որ վերը նշված գուն և խոու իշխաններն ունեցել են 100 000-ի հասնող բանակ:

2. Մեկնաբան Լի Յյուանը լու տերմինը բացատրում է որպես վահան, որով զինվորները պաշտպանում էին իրենց գլուխները քաղաքային պարիսպները գրոհելիս: Այն պատրաստվում էր ձեռքի տակ գտնվող նյութերից: Մեկնաբան Յաո գունը լուն բացատրում է որպես մեծ վահան:

3. Պաշարողական մարտակառքը (ֆենվեն), մի շարք մեկնաբանների նկարագրության համաձայն, իրենից ներկայացրել է քառանիվ փայտե կառք: Այն պատվել է շմշակված (հում) կաշվով: Դրանք օգտագործել են քաղաքների պաշարման ժամանակ, քաղաքային պատը շրջապատող խանդակը հողով լցնելու համար:

4. Սուն Յըզին գտնում է, որ ուժերի քանակական գերազանցությունը վճռորոշ նշանակություն ունի: Եթե տասնապատիկ առավելություն ունենաս՝ ապա պետք է շրջապատես հակառակորդին, և նա պետք է անձնատուր լինի: Ուժերի հնգակի գերազանցության դեպքում պետք է կիրառվի ուղղակի հարձակման մարտավարություն, նպատակ ունենալով ճնշել հակառակորդին թվային գերազանցությամբ և հարկադրել նրան անձնատուր լինել: Կրկնակի առավելության դեպքում չի կարելի ուղղակի հարված հասցնել: Առաջարկվում է դիմել զորաշարժի (մանյովր)՝ զորքը բաժանել երկու մասի, որոնցից յուրաքանչյուրը պետք է հավասար լինի հակառակորդի ուժերին: Մի մասով գրոհում են հակառակորդի թիկունքին կամ թևին: Այդ հնարքն ուղղված է նրան, որպեսզի հակառակորդին հարկադրեն հանձնվել առանց մարտի: Պատերազմի այդ երեք կանոնները նշանակում են հաղթել հակառակորդին՝ «ողջ զորքը պահպանելով» ամբողջականության մեջ:

Կռիվն անխուսափելի է, եթե երկու կողմերի ուժերը հավասար են: Սուն Յըզին ասում է. «Ուժերի հավասարության դեպքում կարելի է մար-

տը վարել»: Այդ դեպքում հաղթանակը կախված կլինի զորավարի հմտությունից, նրա զորքի քաջությունից և տոկոսնությունից:

Հակառակորդի թվային գերազանցության դեպքում, Սուն Յըզին, ելնելով ընդհանուր տեսությունից, գտնում է, որ լավագույն հաղթանակը՝ հաղթանակն է առանց ճակատամարտի: Նա առաջարկում է նահանջել կամ խուսափել մարտից, հավանաբար, որպեսզի ժամանակ շահի և հաղթանակն ապահովող պայմաններ ստեղծի: Հիմք ընդունելով իր տեսությունը, Սուն Յըզին խորհուրդ է տալիս. «Երբեք մի շրջապատիր հակառակորդին չորս կողմից»: Դու Սունն այդ միտքը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Թշնամուն ցույց տուր կյանքի ճանապարհը: Այնպես արա, որ նրա մոտ ոչ մի դեպքում մահվան մասին միտք չլինի: Եվ, օգտվելով դրանից, հարձակվիր նրա վրա»: Մեկ այլ մեկնաբան՝ Լի Յյունը, ասում է. «Հայտնի է, որ շրջապատելով թշնամուն, անպայման մի կողմը պետք է թողնել բաց, ցույց տալով, որ շրջապատումն ամուր չէ: Եթե նրան չորս կողմից շրջապատես, (ապա) թշնամին անպայման կնախաձեռնի պաշտպանություն, այնպես որ, նրան այնտեղից դուրս չես քաշի»:

5. Եթե առաջին գլխում Սուն Յըզին առաջադրում էր տիրակալի և ժողովրդի բարոյական միասնություն, ավելի ստույգ՝ ժողովրդի անվերապահ ենթարկվելը տիրակալին, ապա այստեղ նա շեշտը դնում է զորքի բարոյական վիճակի և նրա անվերապահ հնազանդությունը զորավարին:

6. Սուն Յըզին պահանջում է զորավարին տալ լրիվ ինքնուրույնություն: Բացառվում է ամեն տեսակի միջամտություն տիրակալի կողմից զորքերի ղեկավարմանը:

IV գլխի ծանոթագրությունները

1. Սուն Յըզիի պատկերացմամբ, պաշտպանությունն արդյունք է որոշ թուլության, սակայն դա չի նշանակում միայն սեփական թուլություն, դա նշանակում է, որ հակառակորդի մոտ թույլ տեղ չկա, ուստի չի կարելի պաշտպանությունից անցնել հարձակման: Եվ հակառակը՝ հարձակումն ուժի առկայության արդյունք է: Սակայն դա ոչ

միայն սեփական ուժը չէ, այլ հակառակորդն ունի որոշակի թուլություն, որը հնարավորություն է տալիս անցնել հարձակման:

2. Տաղանդավոր զորավարը հաղթանակը տեսնում է նրա սաղմում: Դրանով է նա տարբերվում սովորական մահկանացուներից, որոնք հաղթանակը տեսնում են միայն այն ժամանակ, երբ այն իրականացվել է:

3. «Իրականացնել ուղին» հասկացությունը մեկնաբան Մեյ Յու-չեն բացատրում է որպես հարձակման և պաշտպանության էության ճիշտ հասկացություն: «Պահպանել օրենքը» նշանակում է ճիշտ հասկանալ պատերազմի հինգ օրենքները՝ երկարությունը, ծավալը, թիվը, քաշը, հաղթանակը:

4. Պատերազմի վարման հինգ օրենքները մեկնաբանները բացատրում են հետևյալ կերպ՝ «երկարությունը» հակառակորդի և քո միջև ընկած տարածությունն է, «ծավալը»՝ տեղանքի չափն ու ուրվագիծն է, «թիվը»՝ զորքի թվաքանակը, «քաշը»՝ հակառակորդի և քո ուժերի փոխհարաբերությունը, «հաղթանակը»՝ մարտնչող ուժերի գրուության հաշվառումը:

5. «Ձև»՝ նշանակում է զորքերի համակողմանի պատրաստականությունը, նրանց սպառազինությունը, մարտակարգերի, ղեկավարման մեթոդները, ուժերի հարաբերակցությունը և պատերազմողների թույլ կողմերը:

V գլխի ծանոթագրությունները

1. Չինական բանակի կազմակերպչական ձև տես III գլխի թիվ 1 ծանոթագրությունում:

2. «Կանոնավոր մարտը»՝ մարտակարգի դասավորումն է: Ճակատամարտը սկսելուց հետո զորավարի վարպետությունն արտահայտվում էր պետքական ուղղությունմբ, զորաշարժի օգնությունմբ, վճռական հարված հասցնելու մեջ: Մեկնաբան Յզյա Լինը ցույց է տալիս, որ կանոնավոր մարտը և զորաշարժը պահանջում են մարտի ընթացքում զորամասերի փոխհամագործակցություն:

3. «Լեփ-լեցունությունը»՝ նշանակում է պատրաստականություն և կանոնավոր մարտ կիրառելու հնարավորություն: «Դատարկություն»՝ նշանակում է զորքի թուլություն, անպատրաստվածություն: Ուստի Սուն

Յրգին գտնում է, որ հակառակորդին հասցված հարվածը պետք է լինի հարված իր ողջ «լեփ-լեցունությունը», որը հարվածում է «դատարկությանը», ինչպես ջրաղացքարն է հարվածում փխրուն ձկին:

4. Յգյան և խե տերմինները կարելի է թարգմանել նաև իրենց կոնկրետ անուններով՝ Յանցզի և Խուանխե, բայց քանի որ Սուն Յրգին այդ բաժնում խոսում է ընդհանուր (ոչ կոնկրետ) բնական երևույթների՝ «երկինք և երկիր», «արև և լուսին», «տարվա չորս եղանակները», ապա այդ տերմինները (ցզյան և խե) թարգմանվել են որպես գետեր և հոսանքներ, որոնք նույնպես ընդհանուր բնական երևույթներ են:

5. Ի նկատի ունի, որ մարտակարգի ժամանակավոր կազմալուծման ետևում թաքնված է ներքին կարգապահությունը, խախտված շարքերի վերականգնման միտումը: Կավ նախապատրաստված (վարժեցված) և կարգապահ զորքերը, չնայած «ձևի», այսինքն՝ մարտակարգի խախտմանը, չեն կորցնում իրենց ներքին ամրությունը և հետևաբար «չեն կարող պարտություն կրել»:

6. Այդ ասույթները վերցվել են Ի-Յրգին գրքի («Փոփոխությունների գիրք») «Սի ցի չժուան» մեկնաբանությունից, ուր աշխարհակարգի համակարգը արտահայտվում էր սահման հասկացություն մեջ: Յուրաքանչյուր երևույթ վերափոխվում է մեկ այլ երևույթի այն դեպքում, երբ առաջին երևույթը հասել է իր սահմանին: Հասնելով իր սահմանին, այն տրոհվում է երկու հակադրությունների, որոնցից յուրաքանչյուրը զարգանալով մինչև իր սահմանը, կրկին տրոհվում է երկու հակադրությունների:

Այս տեսության համաձայն, «կարգ ու կանոնը» կարող է հասցվել իր սահմանին: Բավական է, որ առաջանում է այդ կարգի գերազանցատում և արհամարհանք նրա նկատմամբ: Արհամարհանքի ի հայտ գալով, կարգ ու կանոնը սովորաբար փլուզվում է և վեր է ածվում անկարգության: Համանման երևույթներ տեղի կունենան ուժի և թուլության, քաջության և վախկոտության հետ:

7. «Թիվը»՝ ստորաբաժանումները, մարտակարգերն են, որոնց մեջ կարող է լինել կարգ ու կանոն և անկարգություն: «Հզորությունը»՝ զորքի ներքին ուժն է: Հզորության մեջ են սաղմնավորված վախկոտու-

թյունն ու քաջությունը, որոնք ի հայտ են գալիս որոշակի իրադրու-
թյունից կախված: «Ձևը»՝ զորքի վիճակն է, նրա մարտունակությունը:
Մարտունակության աստիճանը որոշում է զորքի ուժն ու թուլությունը:

Մեկնաբանների հայտարարության համաձայն, վերը հիշատակած
ցուցումների գործնական կողմն ուղղված է նրան, որպեսզի սեփական
անկարգությունը ցուցադրելով հակառակորդին, կարողանա խաբել
նրան: Խաբեությունը ոգևորված հակառակորդն անցնելով հարձակման,
հանդիպելով մարտակարգին, շփոթության մեջ է ընկնում և ջախջախ-
վում: Խաբելով հակառակորդին վախկոտության և թուլության ցու-
ցադրմամբ, նրա մոտ թեթև հաղթանակի պատրանք են առաջացնում,
սակայն հանդիպելով քաջությանն ու ուժին, հակառակորդն ինքն է հնա-
րավորություն ստեղծում իրեն հաղթելու համար:

8. Այլ կերպ Սուն Յըզին պնդում էր, որ հաղթանակը չի վճուվում մի-
այն ռազմիկների և հրամանատարների ընդունակություններով: Հաղ-
թանակը որոշում է զորքի ընդհանուր «հզորությունը»: Զորքը, սակայն,
բաղկացած է զանազան ընդունակություններ և որակներ ունեցող ան-
հատներից: Այդ է պատճառը, որ մեկնաբան Չժան Յույը գտնում է, որ գո-
րավարը պետք է օգտագործի յուրաքանչյուր զինվորի «հզորությունը».
մեկի խելքը, մյուսի հնարամտությունը, երրորդի քաջությունը, չորրորդի
ազահությունը և այդպես շարունակ: Զորավարից է կախված առանձին
ռազմիկների «հզորությունից» արարել զորքի հզորությունը, որի վերջ-
նական նպատակը հաղթելն է:

9. Այդ պատկերավոր արտահայտությամբ Սուն Յըզին ցույց է տալիս,
որ մկանային ուժով չի կարելի գերանը կամ քարը տեղաշարժել , սակայն
բարենպաստ պայմաններում (զառիվայր տեղանք) դա դյուրին է կատա-
րել՝ օգտագործելով զորքի ներուժը, այնպես, ինչպես օգտագործվեց քարի
սեփական ծանրության ուժը՝ լեռից այն ներքև գլորելու համար:

VI գլխի ծանոթագրությունները

1. «Լեփ-լեցունությունը», «լիակատարությունը» հաս-
կացվում է որպես լրիվ, ամբողջական մարտական պատրաստականու-
թյուն, ակտիվ մարտական գործողություններ վարելու զորքի ունակու-

թյուն, նրա ամբողջական անխոցելիություն հակառակորդից: «Դատարկությունը»՝ նշանակում է զորքի ոչ բավարար պատրաստականություն, մարտական գործողություն վարելու թույլ ունակություն: Իր երկրի զանազան մասերում Սուն Յրզին յուրաքանչյուր ուժեղ կետը կամ էլ դրուժյունն անվանում է «լիակատարություն», իսկ ցանկացած թույլ, խոցելի կետը կամ դրուժյունը՝ «դատարկություն»:

2. Սուն Յրզին առաջարկում է հակառակորդի համար կարևոր վայրի, դիրքի վրա կատարել կեղծ հարձակում: Այդ դեպքում նա իր ողջ ուշադրությունը կկենտրոնացնի դրա վրա և ճանապարհ կբացի իսկական հարձակման օբյեկտի վրա: Հակառակորդն իր ողջ ուշադրությունը և ուժերը կենտրոնացնելով կեղծ ուղղության վրա, բնական է, որ կթուլացնի իր ուշադրությունն այլ ուղղություններում, որտեղ կարելի է «անցնել 1000 լի և չհոգնել»:

3. Սուն Յրզին պարտադիր չի համարում ունենալ քանակային գերազանցություն հակառակորդի նկատմամբ: Բավական է պահպանել իր զորքի ամբողջականությունը, իսկ հակառակորդին մասերի բաժանել, որպեսզի հետո ջախջախել նրանց առանձին-առանձին: Դրան կարելի հասնել հակառակորդին կեղծ «ձև» ցույց տալով տարբեր տեղերում, ապակողմնորոշել նրան, որն անխուսափելիորեն կբերի նրան, որ հակառակորդը կմասնատի իր ուժերը: Նման ուղիով կարելի է հասնել ցանկալի ուղղությամբ քանակական գերազանցության:

4. Սուն Յրզին իր երկը գրել է իշխան Խե լուի (Ու իշխանության իշխանի) համար, որի մոտ նա ծառայում էր որպես զորապետ: «Յուժենների» մասին կոնկրետ հիշատակումը հիմք է տալիս եզրակացնելու, որ երկը գրվել է Ու և Յուե իշխանությունների միջև տեղի ունեցած պայքարի ընթացքում: Այդ իշխանությունների միջև մարտական գործողությունները տեղի են ունեցել մ.թ.ա. V դարի վերջին և մ.թ.ա. IV դարի սկզբին (տե՛ս թիվ 1 ծանոթագրությունը):

5. «Հակառակորդին գնահատել» հասկացությունը կարելի է հասկանալ որպես վաղօրոք, մինչև մարտական գործողությունների սկսվելը, կանխատեսել, թե ինչպիսին կլինի հակառակորդի ռազմավարու-

թյունն ու մարտավարությունը: Ուստի Սուն Յրզին 13-րդ գլխում տալիս է հետևյալ կոնկրետ ցուցումը՝ հավանական հակառակորդի նկատմամբ գործակալային հետախուզություն վարելու մասին:

6. Հակառակորդի կոնկրետ մարտավարությունը՝ «նրա շարժումն ու հանգիստը» կարելի է հասկանալ «կեղծ» ձևով, այսինքն՝ հետախուզություն մարտով: Հակառակորդի արձագանքը կեղծ «ձևին» ցույց կտա նրա «կյանքի ու մահվան տեղը», «առատությունն ու պակասը», այսինքն՝ թույլ և ուժեղ կողմերը, խոցելի և անխոցելի տեղերը կամ մասերը:

7. Այդ ձևակերպումներում Սուն Յրզին դիմում է առարկայի զարգացումը մինչև իր սահմանը փիլիսոփայական հասկացությանը: «Ձևը» զարգանալով հասնում է իր սահմանին և վեր է ածվում իր ժխտմանը՝ ձևի բացակայությանը: Այդ պայմաններում զորքի կազմակերպվածությունը, մարտունակությունը, ճկունությունը, զորաշարժությունը օրգանական հատկություններն են: Հետևաբար ձևի բացակայությունը կազմակերպվածության սահմանն է (վերջնագիծը), այնպիսի կազմակերպվածություն, որ «նույնիսկ հմուտ լրտեսը չկարողանա որևէ բան պարզել», իսկ «իմաստունը չկարողանա որևէ բանից գլուխ հանել»:

8. Այսպիսով, բանակի հզորությունը չի կարող անփոփոխ լինել: Այն կախված է քեզանից և հակառակորդից: Մշտապես փոփոխվող իրադրությունից կարողանալ գլուխ հանել, հաղթանակի հասնելու համար զորքերը ղեկավարելու արվեստը՝ այնքան բարդ և խորն է, որ Սուն Յրզին այդ բոլոր որակներին տիրապետող զորավարին անվանում է «աստվածություն»:

9. Հին Չինաստանում բնության հինգ ուժերը նշանակում էին ջուր, կրակ, փայտ, մետաղ և հող: Տարերային դիալեկտիկայի համաձայն, այդ տարրերը մեկից մյուսն են անցնում՝ փայտը վեր է ածվում կրակի, կրակը՝ հողի, հողը՝ մետաղի, մետաղը՝ ջրի, ջուրը՝ փայտի: Այդ անցումն ընկալվում է որպես մի տարրի կողմից մյուս տարրի «ծնունդ» և «հաղթահարում»: Այդ զարգացումն ու անցումը կրում են աստիճանական և անընդհատ փոփոխությունների բնույթ, ուստի նրանց մեջ «չկա մշտապես հաղթող»:

Այդպիսի նշանակություն ունեն նաև տարվա շորս եղանակները, որոնց մեջ չկա «մշտապես հաստատվածը»: Այդպիսին են բնության փոփոխություններն ու փոխակերպումները, այդպիսի օրենքներ են ընկած նաև պատերազմի էություն մեջ, նրանում չեն կարող լինել «մշտապես հաստատված կանոններ»:

VII գլխի ծանոթագրությունները

1. Առաջադրելով ուղիղ և շրջանցիկ ուղիների հարաբերակցության հարցը, որը հնարավորություն է տալիս հասնել հաղթանակի, Սուն Յրզին ցույց է տալիս, որ երբեմն շրջանցիկ ուղիները կարող են ավելի շուտ նպատակին բերել, քան ուղիղ ճանապարհը:

2. Դու Սուն հայտնում է, որ հին չինական գործերի սովորական անցումը կազմել է 30 լի: Չժան Յուչը ավելի սպառիչ տեղեկություններ է հայտնում գործի օրագնացի մասին. «Զորքն օրական անցնում է 30 լի և կանգնում է այն ժամանակ, երբ անցնում է 50 լի, իսկ դրանից ավելին կլինի կրկնակի երթուղի: Օր ու գիշեր գնալ չհանգստանալով՝ «անընդհատ երթուղին է»:

3. Սուն Յրզին խոսքերի իմաստը հետևյալն է՝ երբ հակառակորդի դեմ պայքարում են 100 լից ավելի, թեթևագեն ջոկատները պոկվում են առաջ, մարդիկ ընկնում են, ձիերը հոգնում են, մարդիկ ցանկանում են ջուր խմել և ջուր չեն գտնում: Եթե հանկարծ հանդիպում են հակառակորդին, ապա դա նշանակում է, որ ուժասպառ եղածները պետք է դիմակայեն թարմերին, սովածները՝ կուշտերին, բանակի գլուխն ու պոչը (առաջապահ և վերջապահ ուժերը) կորցնում են միմյանց հետ կապը: Այդ է պատճառը, որ երեք բանակների հրամանատարները գերվում են հակառակորդի կողմից:

4. Սուն Յրզին հիշատակում է «Զորքերի ղեկավարումը» անհայտ ռազմական գործի մասին: Մեյ Յո-չենը այդ գործն անվանում է «Հնագույն ռազմական կանոն», Վան Յրզին՝ «Հնագույն գիրք պատերազմի մասին»: Այս ամենից հետևում է, որ Սուն Յրզինցի դեռ շատ առաջ գոյություն ունեին մեծաքանակ գործերը ղեկավարելու կանոններ, որոնք վերաբերում են կոչնագանգերի (գոնգերի), թմբուկների, դրոշակների և

նշանների օգնությամբ զինված ուժերը ղեկավարելուն: Զորավար Սիմա-Յան Յզուլչի (մ.թ.ա. VI դար) «Սիմա Ֆայի» («Սիմի օրենքները») երկում՝ այդ մասին ասված է. «Թմբկահարությամբ ազդանշան է տրվում մարտակարգերին, հեծելազորին, հետևակին, զենքին, գլուխներին, ոտքերին»: Դրոշակներով նշվում էին մարտական կառուցվածքի մասերը՝ առաջապահ և վերջապահ ուժերը և թևերը: «Յուրաքանչյուր հրամանատար ունի իր հատուկ նշանը», - ասում է Վեյ կյաո-Յըզին: Այսպիսով, զորաշարքերի ղեկավարումը և զորքերի գործողությունների ղեկավարումն իրականացվում էին ձայնային ազդանշանների՝ թմբկահարությամբ, կոշնագանգերի, ինչպես նաև տեսողական ազդանշանների՝ դրոշակների և դրոշների օգնությամբ:

5. Այստեղ Սուն Յըզին պահանջում է զորքերի ղեկավարման լիարժակ միասնականություն: Չժան Յուլը դա հետևյալ կերպ է պարզաբանում. «Երբ ռազմիկները շատ են, ստիպված ես ընդարձակ տարածք զբաղեցնել, (որի) պատճառով զորքի գլուխն ու պոչը (առաջապահ և վերջապահ ուժերը) միմյանցից հեռու են գտնվում, և ռազմիկները միմյանց չեն տեսնում և չեն լսում: Ուստի նրանց լսողությունը մի ինչ-որ բան են հասցնում հարվածելով թմբուկներին, բարձրացնելով դրոշակները, նրանց մի ինչ-որ բան են ցույց տալիս: Երբ բոլորի աչքերն ու ականջները ուղղված են մի ինչ-որ բանի վրա, թեկուզ այստեղ միլիոն մարդ լինի, նրանք կգործեն ինչպես մեկը»:

6. Սուն Յըզիի երկի մեկնաբան Լի Յյուանը դա հետևյալ կերպ է բացատրում. «Հայտնի է, որ թշնամուն շրջապատելիս, կողմերից մեկն անպայման պետք է ազատ թողնել, ցույց տալով (որ շրջապատումը) ամուր չէ: Եթե նրան շորս կողմից շրջապատես, (ապա) թշնամին անպայման կպաշտպանվի, (այնպես որ) նրան դուրս չես հանի»: Դու Մուն նույն միտքը հետևյալ կերպ է մեկնաբանում. «(Հակառակորդին) ցույց տուր կյանքի ճանապարհը, որպեսզի (նրա մոտ) ոչ մի դեպքում մահվան միտք չառաջանա: Եվ օգտվելով դրանից, հարձակվիր նրա վրա»:

VIII գլխի ծանոթագրությունները

1. «Ինը»՝ «իցզինյան» թվերի շարժման վերջին սահմանն է: Ինը զարգացման բարձրագույն թիվն է, որից հետո գալիս են նոր թվեր, որպեսզի կրկին աճման ուղիով հասնեն սահմանագծին, այսինքն՝ ինին և նորից վերադառնան սկզբին, սակայն արդեն նոր բովանդակությամբ: Դրանք երևույթների հավերժ փոփոխություններն են, մշտական անցում մի վիճակից մյուսին: Այսպիսով, Սուն Յըզիի հասկացությամբ «ինը փոփոխությունները» անվերջ փոփոխություններ են: Գիտենալով անհամար փոփոխությունների էությունը՝ «կիմանաս, թե ինչպես պատերազմ վարես»: Հետևաբար տեղանքի «ձևում», նրա փոփոխություններում պետք է կարողանալ հաշվի առնել այն ամենը, ինչն անմիջականորեն շփվում է տեղանքի հետ: Ահա այստեղ է գտնվում օգուտը, որը կարող է և օգտագործվել զորավարի կողմից:

2. Հինգ թվականը («հինգ օգուտ») մեծ տեղ է զբաղում չինացիների պատկերացումներում, ինչը երևում է Սուն Յըզիի երկից: Նրանց պատկերացմամբ, բնությունը կազմված է հինգ տարրերից, որոնց սպեկտորը բաղկացած է հինգ գույներից, հիմնական համը հինգն է, երաժշտական գամման ունի հինգ ձայնաստիճան (տոն): Զորավարի հատկությունները բաղկացած են հինգ սկզբունքներից (իմաստություն, արդարացիություն, մարդասիրություն, քաջություն, խստություն): Ուստի «հինգ օգուտը» գործածվում է բազմաթիվ օգուտների իմաստով, այնպես, ինչպես «ինը փոփոխությունները»՝ ընդհանրապես բազմաթիվ փոփոխություններ են, որոնք զորավարը պարտավոր է հաշվի առնել և օգտագործել մարդկանց ղեկավարելիս:

3. Սուն Յըզին առաջարկում է «օգուտը» միացնել «վնասի» հետ: Դրանք երկու հակադիր հասկացություններ են: Սակայն միաժամանակ օգուտի մեջ ամփոփված է անշահեկանությունը, և վնասի մեջ կան օգուտի տարրեր: Գործնականում, եթե տեսնում ես օգուտը, այն կարելի է օգտագործել, երբ հաշվի կառնես և կարող ես վերացնել ողջ վնասը, որը պոտենցիալ կերպով ամփոփված է այդ օգուտի մեջ: Կարող ես վերաց-

նել վնասը, եթե հաշվի առնես և կարողանաս օգտագործել այն շահը, որը պոտենցիալ կերպով ամփոփված է վնասի մեջ:

4. Քաջությունը, խելամիտ զգուշությունը, մարտական կատաղությունը, պատվի զգացումը և բարությունը պետք է հանդիսանան զորավարի գլխավոր հատկությունները: Սակայն Սուն Յըզին ցույց է տալիս, որ այդ յուրաքանչյուր որակի ետևում թաքնված է մեծ վտանգ. քաջության մեջ՝ մահվան հնարավորություն, զգուշության մեջ՝ գերվելու վտանգ, կատաղության մեջ՝ ինքնատիրապետման կորուստ, պատվի զգացման մեջ՝ ավելորդ անհանգստություն: Սուն Յըզին մեծ նշանակություն է տալիս այդ վտանգներին, քանի որ զորավարի այդ հինգ թերությունները կարող են բերել հենց իր՝ զորավարի և նրա բանակի կործանմանը:

IX գլխի ծանոթագրությունները

1. Այստեղ Սուն Յըզին ի նկատի ուներ առանձին ցեղերի հնազանդեցումը և ցեղային մի առաջնորդի գերիշխանության հաստատումը ուրիշի նկատմամբ:

Չինական պատմությունը խուան-դիին (Դեզին կայսր) համարում է չինացիների առաջին միավորողը: Նրան են վերագրվում մի շարք հայտնագործություններ հողագործության զարգացման մեջ, կշռի և երկարության համակարգում, մետաքսագործության, աղեղի պատրաստման և այլ բնագավառներում:

2. Դու Մունը մեկնաբանում է այս միտքը. «Հակառակորդը լքում է ճամբարը (այնպես), որ ցույց է տալիս, թե ինքը շարունակում է մնալ այնտեղ»: Դու Մունը բերում է զորավարներից մեկի օրինակը, որը խաբվելով, չի նկատել, թե ինչպես հակառակորդը կեղծ ճամբար պատրաստելով, նրա տարբեր մասերում խռուչվյալներ վառելով՝ աննկատ հեռացել էր: Զորավարը միայն երկրորդ օրն է նկատում այդ:

3. Մեկնաբանները դա բացատրում են հետևյալով՝ քանի որ կորեկավարձն առօրյա ուտելիք էր, իսկ միսը թանկ սննդանյութ էր, ուստի, եթե հակառակորդը կորեկավարձով առատորեն կերակրում էր ձիերին, իսկ միսն ուտում էր առանց փսոսալու, ապա դա նշան է այն բանի, որ

հակառակորդը հավասարակշռությունից դուրս է եկել և մտածում է միայն հուսահատ կռիվ տալու մասին:

4. Դու Մունը պարզաբանում է. «Թշնամու կողմից կգերվի նա, ով խորը պլաններ չունի, (ով) հենվում է միայն սեփական քաջություն վրա, արհամարհանքով է վերաբերվում հակառակորդին, թեթևամիտ է, չի հետևում (հակառակորդին):

5. Դու Մունը հետևյալն է ասում.« (եթե) բարությունը չի զուգակցվում հավատով, (ապա) չի կարելի պատիժների և մահապատիժների միջոցով մարդկանց համախմբել»:

6. Դու Մունը մեկնաբանում է. «Դա նշանակում է (որ նա, ով) դառնում է զորավար, (և) ժամանում է այն ժամանակ (ստանձնում է զորքի հրամանատարությունը), երբ ռազմական գործողություններ չեն ընթանում, (ապա նրա) հրամանները պետք է լինեն բարի, վստահություններ չնշող (և, ի վերջո) սարսափեցնող: Սկզբնապես (հրամանները) մարդկանց համար պարզ (և հստակ) պետք է լինեն: Դրանից հետո, երբ կհակադրվես (կմարտնչես) թշնամուն (և) օրենքներ կսահմանես՝ ողջ ժողովրդին (զորքին) հավատով կենթարկես քեզ»:

Մ զլխի ծանոթագրությունները

1. Դու Մունն այդ միտքը հետևյալ կերպ է մեկնաբանում. «Որպեսզի մեկ (հոգով) հարձակվես տասի վրա, սկզբնապես անհրաժեշտ է, որպեսզի դու տասն անգամ գերազանցես թշնամուն պլանների մշակմամբ (ծրագրավորմամբ, պլանավորմամբ), զինվորների քաջությունամբ..., տեղանքի առավելությունամբ, զինվորների կուշտ և սոված լինելու աստիճանով, (և) միայն դրանից հետո կարելի է ոգևորվել մեկին՝ տասի դեմ հարձակվելու համար: Եթե (հակառակորդների) հզորությունները և ուժերը հավասար են, սակայն (դու) չես կարող գնահատել քո ուժերը (և) քո մեկով հարձակվես թշնամու տասնյակի վրա, ապա (դու) հարկադրված կլինես փախչել»:

2. Դու Մունն պարզաբանում է. «Չեն իստոն ասում է. «Տեղանքի գերազանցությունը եղանակից էլ կարևոր է»: Գնահատել հակառակորդին,

որոշել վտանգավորն ու դժվարը, հեռուն և մոտիկը՝ դա զորավարի բարձրագույն ուղին է»:

3. «Երեք մարտավարություն» երկի հեղինակ Խուանչի Գունը (մ.թ.ա. II դար) հետևյալ կերպ է կարևորում տիրակալ և զորավար հարաբերությունները: Զորքի դուրս գալը (և) բանակի շարժումը՝ (այդ) ամենը միայն զորավարի հրամանով է կատարվում: Եթե հարձակումը դեկավարվում է միայն ներսից (արքունիքի կողմից), դժվար է հաջողություն հասնել: Ուստի իմաստուն թագավորը և լուսավորյալ իշխանը ծնկի են իջնում և առաջ մղելով (զորավարի կառքի) անիվը, ասում են. «Զորավարը վճռում է (բոլոր) գործերն (իմ) պալատի շեմից դուրս»: Այս օրինակով հստակորեն սահմանազատվում են տիրակալի և զորավարի պարտականություններն ու իրավունքները: Տիրակալը պետք է վստահի իր զորապետին և անտեղի չխառնվի նրա գործերին: Պատմությունը վկայակոչում է բազմաթիվ դեպքեր ու փաստեր, երբ նման միջամտությունը ինչ ցավալի և նույնիսկ աղետալի վերջաբան է ունեցել պետության և ժողովրդի համար:

4. Ռազմական գործի գիտակ Լի Յըզին (571-649 թթ.) պատիժների վերաբերյալ իր մեկնաբանությունն է կատարում. «Հնում հմուտ համարվող զորավարները տասը մարդուց (հանցանքի դեպքում) անպայման սպանում էին երեքին: (Նրանց) հետևող (զորավարները) տասից մեկին էին սպանում: (Նրանք ուլքեր) տասից երեքն էին սպանում, ահաբեկում էին թշնամական պետությունը, (նրանք, ուլքեր) տասից մեկին էին սպանում, հասնում էին ողջ բանակում հրամանների կատարմանը: Դրանից հետևում է՝ նա, ով սարսափեցնում էր ինձ՝ չէր վախեցնում թշնամուն, ով ահաբեկում էր թշնամուն՝ չէր վախեցնում ինձ: Բարությունը, թեկուզև ամենաքիչը, առանց պարգևատրման մի թողնիր, շարությունը՝ թեկուզև ամենաչնչին՝ անպատիժ մի թողնիր»: Եվ Սուն Յըզին, և մյուս մեկնաբանները ընդգծում էին՝ զորավարն իր ողջ գործունեության ընթացքում պետք է առաջնորդվի միայն ու միայն օրենքով նախատեսված կանոններով:

XI գլխի ծանոթագրությունները

1. Սուն Յըզին տեղանքի յուրօրինակ սահմանում է տալիս: Նա բաժանում է տեղանքը երեք տեսակի (կատեգորիաների): Առաջին տեսակի կամ խմբի մեջ է մտնում սեփական տարածքը: Իրենց ընտանիքներից ոչ հեռու գտնվող ռազմիկներն ու հրամանատարները կարող են փախչել, ուստի Սուն Յըզին այդպիսի տեղանքն անվանում է «ցրող տեղանք»:

Երկրորդ խմբին է պատկանում սահմանային շերտը: «Երբ ռազմիկներն ու հրամանատարները հակառակորդի տարածք դեռ նոր են մտնում, մտածում են տուն վերագառնալու մասին: Դա նշանակում է, որ նրանք վերագարձը թեթև գործ են համարում»: Այդպես է մեկնաբանում Զժան Յուլը «թեթև կամ սահմանային տեղանքը»:

Երրորդ խմբին են պատկանում տեղանքի մյուս տեսակները: «Երբ գործը խորանում է հակառակորդի տարածքը, այլևս չկա տուն վերագառնալու տրամադրություն: (Յառ գուն կամ Յառ Յառ՝ քաղաքական գործիչ և գորավար (220-280 թթ.), Վեյ իշխանության տիրակալ, Սուն Յըզիի երկի առաջին մեկնաբանը):

Սուն Յըզին իր երկում մեծ տեղ է հատկացնում աշխարհագրական պայմաններին, գտնելով, որ դրանք անշափ կարևոր են. «Ժամանակը, ժամը, պահը, մի շարք աննշան պարագաներ հաճախ ապահովում են հաղթանակը: Կարողանալ որսալ ժամանակը, պահը, օգտվել իրադրությունից՝ մարտը սկսելու, վարելու և ավարտելու համար, նշանակում է մարտը ժամանակին սկսել: Երբ արևը շողշողում է հակառակորդի աչքերին, երբ ուժեղ քամին փչում է նրա երեսին, եթե նրա բանակի տարբեր ջոկատների միավորումը չի կայացել, եթե սպասված օգնական ուժերը չեն ժամանել, երբ հակառակորդը հանգստի կարիք ունի, երբ նա մատակարարումն ապահովող միջոցներ չի ձեռնարկել, երբ նա տառապում է ծարավից ու սովից, երբ նրա արի ավագ գեներալներից որևէ մեկը բացակայում է կամ էլ հիվանդացել է՝ առանց տարակուսելու գրոհեք»:

2. Զժուան-չժուն և Յառ Գույը ցիկե էին («վրիժառուններ»): Զժուան-չժուն բնակվում էր Ու խանությունում (Չանցյուչի ժամանակաշրջանում, մ.թ.ա. 722-481 թթ.): Երբ Ու-ի արքայազն Գուանը ցանկանում էր ֆիզիկապես ոչնչացնել իշխան Լյաոին, նա այդ հանձնարարեց Զժուան-չժունին: Վերջինս ընթրիքի ժամանակ իրագործեց արքայազնի մտադրությունը: Յառ Գույը բնակվում էր Լու իշխանությունում և ծառայում էր Չժան-գանին (մ.թ.ա. 693-662 թթ.): Նա ձախողակ զորավար էր և երեք անգամ պարտություն էր կրել Յին իշխանության դեմ մղած պատերազմում: Իրա հետևանքով Լու իշխանության հողերի մի մասն անցել էր հակառակորդին: Իշխան Լուն որոշեց հաշտվել հակառակորդի հետ: Երբ տեղի է ունենում երկու իշխանների հանդիպումը, Յառ Գույը, որը գտնվում էր իր իշխանի շքախմբում, անսպասելիորեն դուրս է քաշում իր դաշույնը և այն մոտեցնելով իշխան Յիի կողորդին՝ պահանջում է վերադարձնել գրավված տարածքները:

3. Զանշան լեռը Չինաստանի բարձրագույն գագաթներից է: Զժան Յույը գտնում է, որ զորավարն պետք է իր զորքերի մարտական կառուցվածքն այնպես կազմակերպի և կառուցի, որ նրա մասերն ավտոմատ կերպով աջակցեն միմյանց և մասերից մեկի հարձակման դեպքում մյուս մասն անպայման պետք է հարված հասցնի հակառակորդին: Իս գործողությունների կոորդինացումն է՝ անհապաղ և եռանդուն աջակցություն այն մասերին, որոնք դրա կարիքն ունեն: Վերը նշվածն առաջին հերթին ապահովվում է զորքերին ներքին, բարձր գաղափարական համերաշխությամբ:

«Զանշանյան օձ» արտահայտությունը, շնորհիվ Սուն Յըզիի, չինական լեզվի գործածության մեջ մտավ որպես սրընթաց և ճկուն հասցված հակահարված՝ ի պատասխան հակառակորդի հարվածին:

4. Այստեղ Սուն Յըզին բերում է կոնկրետ օրինակ այն ժամանակվա քաղաքական իրադրությունից, երբ Ու և Յուե իշխանությունները թշնամի էին միմյանց: Սակայն, երբ նրանք մի նավակով, փոթորիկի ժամանակ գետն անցնեն, ապա մեկը մյուսին կօգնի, ինչպես ձախ ձեռքն օգնում է աշին: Այս արտահայտության իմաստը, մեր կարծիքով, հետևյալն է՝ նոր, ահեղ և ավելի հզոր թշնամու դեմ պայքարելու ժամանակ հնարա-

վոր է երկու նախկին հակառակորդների դաշնակցությունն ու միասնական գործողությունները:

«Ուժեհնն ու Յուժեհնը մի նավակում» պատկերավոր արտահայտությունը թեևավոր խոսք դարձավ Ջինաստանում: Այն ցուցադրում է հարկադրական, սակայն ամուր համերաշխություն: Հարկ է նկատել, որ Սուն Յըզին այս օրինակը փոխ է առել «Ի Յըզին» («Փոփոխությունների գիրք») հնագույն փիլիսոփայական գրքից, որտեղ այդ օրինակը հետևյալ տեսքն ունի. «Եթե զենքը վայր դնես լքյալ վայրում, ապա նույնիսկ ազգականները չեն կարող միմյանց պաշտպանել: Եթե ընդհանուր նավակով գետն անցնում են հուր և Յուրե ցեղերի մարդիկ, ապա ինչո՞ւ նրանք պետք է վշտանան այն մասին, որ իրենց մոտ տարբեր տրամադրություններ են: Ուստի գիտենալով իրենց դրությունը, նրանք չեն վշտանում իրենց տարբերություններից և ոչ անմիջականությունից: Եթե նրանք հասկանում են իրենց նպատակադրվածությունը, ապա (միմյանց) չեն պարտադրում (իրենց) ուժերն ու ռազմատենչությունը:

5. Երբ դեռևս գրավված դիրքերում չամրացած զորքին սպառնում էր թշնամու հարձակումը, մարտակառքերը դասավորվում էին քառանկյունի ձևով, իսկ նրանց անիվները թեթևակիորեն խրվում էին հողի մեջ: Ջիերը կապվում էին միասին և տեղաբաշխվում էին մարտակառքերի կողքին: Այսպիսով, շտապ կարգով կազմակերպվում էր օղակաձև պաշտպանություն: Սուն Յըզին գտնում է, որ պաշտպանության այդ միջոցն այնքան էլ հուսալի չէ: Հուսալի միջոցը՝ քաջությունն ու համերաշխությունն է:

6. Միաժամանակ «բարձունք բարձրանալով մի կողմ նետել աստիճանը», «վառել նավերը» արտահայտության հետ մեկտեղ կար երրորդ թեևավոր արտահայտությունը՝ «ջարդել կաթսաները»: Այդ բոլորը նշանակում են՝ իրենց նահանջի ճանապարհից զրկել:

Գու Մունը հետևյալ մեկնաբանությունն է կատարում. «Դա նշանակում է, (որ, եթե) ռազմիկները գտնվում են մահվան տեղանքում, զորավարի և զինվորների ցանկությունները միասնական են: Չսպասելով կարգ ու կանոնի (կոչին կամ հրամանին), (նրանք) իրենք են աշաղուրջ

(և) վախի մեջ են գտնվում, չսպասելով հորդորների (և) հրամանների, իրենք են մերձենում զորավարների (հետ) (և) հավատարիմ են (նրանց):

«Եթե արգելվեն կանխագուշակումները և ոչնչացվեն կասկածները, (ապա) մինչև մահ (ուզմիկները) ոչնչի մասին չեն մտածի»:

Դու Մունը նաև հետևյալ խորհուրդ-մեկնաբանությունն է անում. «Տեղավորիր նրանց (զինվորներին այնտեղ, որտեղից) ելք չկա: Նշանակում է, որ (նրանք ոչ) առաջ, (ոչ) ետ՝ ոչ մի տեղ չեն կարող հեռանալ: Ռազմիկները կկռվեն, լարելով իրենց բոլոր ուժերը, (նրանք) կմեռնեն, (սակայն) փախուստի չեն դիմի»:

Դու Մունը տալիս է վերը նշված մեկնաբանության մեկ այլ տարբերակ. «Բոլոր նրանք, ովքեր հայտնվում են անելանելի դրուժյան մեջ, մահվան տեղանքն ընկնելիս՝ երկյուղից մահով փրկվում են մահից: Եթե դրուժյունը բացարձակապես անելանելի է, ապա բոլորը, հավաքելով իրենց վերջին ուժերը, ձեռնամարտի են դիմում»:

Դու Մուն խորհուրդ է տալիս. «Ռազմական (արվեստի) օրենքների (համաձայն), շրջապատելով զորքը, անպայման անցում թող, որպեսզի (զորքի) մոտ ցանկություն չլինի մահանալ: Այժմ պատկերացնենք, որ գտնվում եմ շրջապատման տեղանքում: Թշնամին բացում է կյանքի ճանապարհը, որպեսզի գայթակղի իմ զինվորներին: Իսկ ես, հակառակը, փակում եմ այն, որպեսզի իմ ուզմիկները ցանկանային անպայման մեռնել (կռվել)»:

7. «Խտացում և ձգում» նմանապես «իցզինյան» սահմանի արտահայտությունն են: Այն բանից հետո, երբ խտացումը հասնում է իր վերջնագծին կամ սահմանին, առաջանում է ձգում: Վերջինս, հասնելով իր սահմանին, առաջանում է խտացում: «Ի-Յըզինում» այդ օրինաչափությունը ցուցադրվում է որդի օրինակով: «Որդը սեղմվում է, որպեսզի ձգվի»: Չին մյուս մտածողներն այդ մյուս օրինակը բացատրում են օձի օրինակով, որը ցատկից առաջ կծկվում է: Մուն Յըզին առաջարկում է զորավարին խտացման և ձգման մեջ փնտրել սեփական օգուտը:

8. «Բավան»՝ հեզեմոն, իշխանների միությունն առաջնորդ: Իշխանների միությունը երևան եկավ այն դարաշրջանում, որը չինական պատ-

մագրություն մեջ կոչվում է Ուբայի դարաշրջան (հինգ առաջնորդների, մ.թ.ա. VII-VI դարեր): Իշխան առաջնորդների երևան գալը հետևանք էր Չժոույան հարստության թուլացման, որի արդյունքում Չժոույան հարստության կազմի մեջ մտնող իշխանությունների նկատմամբ հսկողությունը գրեթե ամբողջությամբ վերացավ:

Իշխանությունների տիրակալները մշտապես երկպառակտչական կռիվներ էին մղում միմյանց դեմ, զուգահեռ դաշինքներ կնքում: Ուժեղ իշխանությունները գրավում էին ավելի փոքր և մանր տիրույթներ: Ուբա ժամանակաշրջանի վերջում մնացին միայն 14 ինքնուրույն իշխանություններ: Դրանցից ամենախոշորներն էին՝ Յի, Սուն, Յըզին, Չու, Յուե, Յին (մ.թ.ա. VIII դարում իշխանությունների թիվը հասնում էր 120-ի):

9. «Բացման և փակման տակ արտահայտությունը հակառակորդի այն գործողություններն ու տեղաշարժերը, որոնց պետք է հետևել, որպեսզի հենց որ հայտնաբերվի հակառակորդի որևէ թույլ կողմ, անմիջապես օգտվել դրանից, որպեսզի թշնամուն պարտության մատնեն:

XIII գլխի ծանոթագրությունները

1. Մեյ Յո- չենն իր մեկնաբանություններում հայտարարում է. «Երբ միմյանց դեմ մի քանի տարի կանգնած 700 000 ծուխ կատարում են պարհակներ, (գրանից հետո) խնայել տիտղոսներ և պարգևներ, և մի ինչ-որ 100 ցզյանի մանրուք, չուղարկել հետախույզներ իրադրությունը պարզելու և դրանով հաղթանակի չհասնել՝ անմարդկայնության գագաթնակետն է»: Եվ ապա. «Թագավորներն անտեղի չեն շարժվել, (և) եթե նրանք շարժվել են, ապա անպայման հաղթել են: Եթե նրանք հերոսություններ են կատարել, ապա անպայման դրանով տարբերվել են մյուս բոլորից: Ինչո՞ւ: Որովհետև նրանք վաղօրոք տեղյակ են եղել հակառակորդի դրության մասին»: Այստեղ խոսքը գնում է հետախույզների ակտիվ գործունեությամբ հակառակորդի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու մասին: Ընդհանրապես, Հին Չինաստանում մեծ ուշադրություն էին դարձնում հետախուզական աշխատանքին, քանի որ վերջինիս օգնությամբ գորավարը ստանում էր իրեն անհրա-

ժեշտ տվյալները, որոնք վերաբերում են թշնամական բանակի սպա-
ռազինուժյանը, թվականացմին, զինվորների և հրամանատարների բա-
րոյահոգեբանական և մարտական հատկանիշներին, զորահրամանա-
տարների միջև եղած փոխհարաբերություններին և այլն: Այդ է պատ-
ճառը, որ Սու Յրզղի երկի մեկնաբաններն ակտիվ կերպով պարզաբա-
նում են զորավարի այս կամ այն միտքը: Դու Մուն ասում է. «Գիտցիր
թշնամու գրությունը: Կանխատեսումը (վաղօրոք որևէ բանի մասին
տեղեկանալ) չի կարելի ստանալ աստվածներից և դեերից, չի կարելի
ստանալ համադրելով (այլ) իրադարձությունների հետ»: Իսկ Յառ Գու-
նը հետևյալ մեկնաբանությունն է կատարում. «Կանխատեսումը չի կա-
րելի փնտրել աղոթքներում, չի կարելի փնտրել դեպքերի նմանություն-
ներում»: Լի Յյունանի մեկնաբանությունը. «Միայն լրտեսները կարող են
իմանալ հակառակորդի գրությունը»:

2. Մանրամասն բացատրություն է տալիս Մեյ Յո-չենը. «Աստվածնե-
րի և դեերի մասին կարելի է իմանալ գուշակությունների օգնությամբ, ի-
րերի մասին՝ նրանց ձևի և բովանդակության մասին, կարելի է իմանալ
դատողություններ անելով նմանության մասին, Տյան և Դի (երկինք և եր-
կիր) օրենքները կարելի է իմանալ հաշվարկների միջոցով, սակայն, երբ
գործը վերաբերում է հակառակորդին, (սպա) անհրաժեշտ է օգտվել հե-
տախույզներից և միայն դրանից հետո կարելի է իմանալ որևէ բան»:

3. Սուն Յրզին թվարկում է հետախույզների հինգ կատեգորիաներ,
որոնք լայնորեն օգտագործվել են այդ ժամանակ: Տեղական հետա-
խույզները հավաքագրվում են թշնամի պետության բնակչությունից, ո-
րոնք համակված են ազահությանը, եսասիրությամբ և փառասիրու-
թյամբ: Դու Մուն ասում է. «Թշնամական պետությունում լավ վերաբեր-
վիր մարդկանց հետ, (նրանց) օգտագործիր իբրև (քո) լրտեսներ»:

«Ներքին հետախույզներին» հավաքագրում են հակառակորդի
բարձրաստիճան աստիճանավորներից և ղեկավարման ապարատում
աշխատող զանազան ծառայողներից: Դու Մուն նրանց մասին հետևյալ
տեղեկություններն է հաղորդում. «Թշնամական աստիճանավորների
(թվում) կան խելացի (մարդիկ), որոնք կորցրել են իրենց պաշտոնը, կան

այնպիսիները, որոնք սխալմամբ ցածր պաշտոններ են զբաղեցնում, կան այնպիսիները, որոնք կատարել են հանցագործություններ և պատժվել են, կան այնպիսիները, որոնք ձգտում են օգտվել (իրենց պետություն) պարտությունից (և) կործանումից, որպեսզի ի հայտ բերեն իրենց ընդունակությունները, որոնք էություն կայուն չեն, փոփոխվող (և) երկերեսանի են: Եթե աստիճանավորներն այդպիսին են, ապա նրանց հետ կարելի է հարաբերություններ հաստատել, հարցնել նրանց կեցություն մասին, նվիրել ոսկի (և) մետաքս, և այդ ձևով նրանց կապել քեզ (հետ): Հենվելով նրանց վրա, կարելի է տեղեկանալ նրանց երկրում տիրող իրադրության մասին, ուսումնասիրել նրանց պլանները, որոնք վերաբերում են մեր գործերին: Ապա կարելի է (թշնամական տերություն) տիրակալին բաժանել իր նախարարից, որպեսզի (նրանց միջև) համաձայնություն չլինի»:

«Վերադարձող հետախույզներ»: Սույն կատեգորիային պատկանում են մերկացված և վերահավաքագրված թշնամական հետախույզները, որոնց կաշառքով կամ հարկադրանքով ստիպում են «վերադառնալ» իր երկիրը և աշխատել իր պետության դեմ: Դու Մուն պարզաբանում է այդպիսի հետախույզների հավաքագրման տեխնիկան: «Երբ ինձ մոտ հայտնվում են հակառակորդի լրտեսները, (որպեսզի) ինձ հետևեն, ինձ անհրաժեշտ է վաղորոք գիտենալ այդ: Կամ առատ կաշառքով գայթակղեցնում եմ նրանց և վեր եմ ածում (լրտեսների, որոնց) մենք օգտագործում ենք, կամ էլ ձևացնելով, որ (ոչինչ) չեմ հասկանում, (նրանց նկատմամբ) կեղծ զգացմունքներ եմ ցուցաբերում (և) ազատ արձակում նրանց: Այդ դեպքում թշնամական լրտեսները վեր են ածվում մեր կողմից օգտագործվող (լրտեսների)»:

Այս պարզաբանմամբ, Դու Մուն նշում է պարտադիր հետախույզական աշխատանքի մասին, որն օգնում է բացահայտել հակառակորդի հետախույզներին և հնարավորություններ գեպքում վերահավաքագրել նրանց:

«Վերադարձող հետախույզների» կատեգորիային Սուն Յըզին մեծ նշանակություն է տալիս, քանի որ նրանց միջոցով բացվում են ամենա-

հուսալի ուղիները հակառակորդի ճամբարում հետախուզական ցանց կազմակերպելու համար: «Նրանցից դու շատ բան կիմանաս», - ասում էր Սուն Յրզին: Իսկ Դու Մուն նշում է. «Հետախուզյունների բոլոր շորս տեսակները՝ և՛ տեղական, և՛ ներքին, և՛ մահվան, և՛ կյանքի հետախուզյունները՝ նրանք բոլորն էլ տեղեկանում են հակառակորդի մասին վերադարձող հետախուզյունների միջոցով»:

«Մահվան հետախուզյուններ»: Այս կատեգորիայի հետախուզյուններին սովորաբար ուղարկում էին հակառակորդի բանակատեղ կեղծ տեղեկություններով, նրան մոլորություն մեջ գցելու նպատակով: Երբ մահվան հետախուզյուն կարողանում էր հաջողությամբ կատարել առաջադրանքը, նա թշնամու կողմից մահապատժի էր ենթարկվում: Նրանք հակառակորդի մոտ էին ուղարկվում խաղաղության մասին բանակցություններ վարելու անվան տակ: Երբ թշնամին, հավատարմով դեսպանի հավաստիացումներին, թուլացնում էր իր զգոնությունը, նրան, անսպասելիորեն հարված էր հասցվում: Երբ բացահայտվում էր դեսպանի իրական դիտավորությունը, նա մահապատժի էր ենթարկվում: Այսպես օրինակ՝ մահվան հետախուզյուններից մեկին, թշնամական տերության տիրակալի հրամանով, կենդանի-կենդանի եփել էին:

«Կյանքի հետախուզյուններ»: Այս հետախուզյունները հակառակորդի մոտ ուղարկվում էին այնպիսի տեղեկությունների ետևից, որոնք ստանալու կամ հայթայթելու դեպքում պետք էր անպայման ետ վերադառնալ կենդանի: Մի շարք մեկնաբաններ գտնում էին, որ այս կարգի հետախուզյունները պետք է տիրապետեին այնպիսի հատկանիշների, ինչպիսիք են՝ իմաստությունը, տաղանդը, զանազան միջոցներով գործելու հմտությունը: Դու Մունի կարծիքով. «Կյանքի հետախուզյունների համար անպայման ընտրում են (այնպիսի մարդկանց, որոնք) արտաքննապես հիմար են (երևում), (իսկ) ներքուստ խելացի են, արտաքննապես՝ թույլ, իսկ ոգով՝ ամուր: (Նրանք) դիմացկուն, առողջ, ամուր (և) քաջ են, սովոր են գտնվել ծանր պայմաններում, կարող են դիմակայել սովին, ցրտին, խայտառակությանը և ամոթին»:

Հետախուզական աշխատանքը ղեկավարողի նկատմամբ Մուն Յրզին մեծ պահանջներ է առաջադրում: Նրա կարծիքով այդ մարդը պարտավոր է «տիրապետել համակողմանի գիտելիքների»: Դու Մուն պարզաբանում է. «Որովհետև, առաջին հերթին, պետք է գնահատել հետախուզի բնավորությունը, նրա անկեղծությունը, ճշմարտասիրությունը, համակողմանի գիտելիքները, և միայն դրանից հետո կարելի է նրանից օգտվել: Երկրորդը՝ պահանջվում է հետախուզիչների նկատմամբ լինել մարդասեր, գլխասիրտ և արդարացի: Երրորդը՝ պահանջվում է «նրբանկատություն և խորաթափանցություն»: Դու Մուն նշում է նաև. «Երբեմն հետախուզը ստանում է թանկարժեք զարդեր և փող, սակայն հակառակորդի մասին տեղեկություններ չի հայթայթում: Այդ դեպքում նա աշխատում է ազատվել առաջադրանքից կեղծիքի (օգնություն): Ահա այդ դեպքում է, որ պետք է լինել զգույշ և խորաթափանց, պահանջվում է կարողանալ նրա հաղորդումներում տարբերել ճշմարտությունը կեղծիքից»: Նման խստագույն պահանջատուները բացատրվում է նրանով, որ կյանքի հետախուզիչները հայթայթում են ռազմավարական նշանակություն ունեցող տեղեկություններ, որոնք կարող են վճռել հակամարտող կողմերից որևէ մեկի ճակատագիրը: Այդ է պատճառը, որ Մուն Յրզինի երկի բոլոր մեկնաբանները գտնում են, որ հետախուզիչների աշխատանքում նրբագույն հեռատեսությամբ և խորաթափանցությամբ օժտված մարդը կարող է «ամեն ինչ վաղօրոք իմանալ և ամեն ինչ կանխատեսել»:

4. Հակառակորդի դեմ պայքարի մարտավարությունը որոշելու համար, Մուն Յրզին առաջարկում է հետախուզիչներին հանձնարարել տեղեկություններ հավաքել թշնամու բանակի, բարձրագույն հրամանատարական կազմի, նրանց շրջապատի, պահակախմբի և այլոց մասին: Դու Մուն պարզաբանում է, թե ինչի համար է այդ ամենը պահանջվում. «Երբ ցանկանում ես հարձակվել, (մինչև այդ) անպատճառ պետք է գիտենալ, թե ով է հակառակորդի մոտ ծառայության մեջ գտնվում, նրանցից ով է խելացի, ով՝ հմուտ, և ով՝ ոչ, ծանր ու թեթև անելով նրանց ընդունակությունները, համապատասխան կերպով գործել նրանց դեմ»:

5. Ին հարստությունը կազմավորվել է մ.թ.ա. 1766թ.: Չինաստանի հնագույն պատմության համաձայն, Սյա հարստության վերջին տիրակալ Յրզե-վանն իր վայրագության և անբարոյականության համար գահընկեց արվեց Շան իշխանության տիրակալ Չժենտանի կողմից:

Ավանդության համաձայն, Ի Չժին ծառայում էր Յրզե-վանին: Ապա որպես ուսուցիչ և ղեկավար, անցել է ծառայության Չեն-տանի մոտ: Հասկանալի է, որ գիտենալով ամեն ինչ, ինչ կատարվում է մայրաքաղաքում, նա նպաստեց նրան, որ իր նոր տիրակալը հասավ հաջողության Սյա հարստության վերջին ներկայացուցիչ Յրզե-վանին տապալելու համար:

Նույնը տեղի ունեցավ նաև Ին հարստության անկման հետ և նպաստեց նրա փոխարեն մ.թ.ա. 1122թ. Չժոու հարստության հաստատմանը: Ին հարստության վերջին տիրակալ Չժոու-վանն իր վայրագությունների համար գահընկեց արվեց չժոույան տիրակալ Ու-վանի կողմից:

Այդպես է գնահատում Սուն Յրզին խոշոր հետախույզների դերը, որոնց օգնությամբ շահում են ճակատամարտերը և գրավում պետական իշխանությունը:

6. Յզյան Լին ասում է, որ գորքն առանց հետախույզության նման է առանց աչքի ու ականջի մարդու: Դու Մուն գրում է. «Չիմանալով հակառակորդի դիրքը, գորքը ոչինչ չի կարող անել, իսկ հակառակորդի մասին կարելի է իմանալ ոչ այլ կերպ, քան հետախույզների միջոցով»: Այս ամենը գալիս է կրկին ու կրկին հաստատելու այն պարզ իրողությունը, որ հետախույզության լավ կազմակերպման դեպքում այն հնարավորություն է տալիս բավականաչափ և ժամանակին տեղեկություններ ստանալ հակառակորդի զորաբանակի մասին, որը հնարավորություն է ընձեռում գործել վստահորեն և վճռականորեն: